


5943



ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՏԵԲԱՅԵՐ թիւ 1 . .

ՄԵԾԻ Ի ՇԽԱՆ ՍԵՐԳԵՅԻ ԳՈՐԾԸ


Բ. ՍԱԻԻՆԿՈՎԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԹԱՐԳ. ՖԱՐ - ZUS

1914, ՊՈՍԹԸ
ՏՊԱՐԱՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»

891.71
Մ-55



891.71
Մ-55

24 MAY 2005

ELOS 97

25 MAY 2010

Յեղափոխական մատենաւար թիւ 1 . .

ՄԵԾԻՇԽԱՆ ՍԵՐԳԵՅԻ ԳՈՐԾԸ

Բ. ՍԱԻԴՆԿՈՎԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԹԱՐԳ. ՖԱՐ - ZUS

1914, ՊՈՍԹԸՆ
ՏՊԱՐԱՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»

8243

28 JUN 2013

12.120

DATA
NOV 25

HR-971 191-2000



I

1905 թւի սեպտեմբերին, Ահարեկիչ
Մարմնի ժընելի Խորհրդի կողմից՝ ինձ
յանձնաբարւեց Մոսկվայի գեներալնա-
հանգապետ Սէրգէյ Ալէքսանդրովիչին
սպանելու գործը: Ինձ հետ Մոսկվա պի-
տի ուղեւորւէին Դօրա Վլադիմիրովնա
Բրիլիանտը, իվան Պլատոնօվիչ Կալեա-
են ու Օպանասը:

Ես իրաւունք ունէի կազմը լրացնելու
էլի մի նոր մարդով: Ազէֆն ինձ առա-
ջարկեց մի հին «նարօգնօվօլլից» բանւորի,
որին կարելի էր գտնել, Ազէֆի ասելով,
Բագւում:

Խմբի գործունէութեան յատակագիծը
հին էր—Պէտէյի գործում արդէն կիրառ
ւած ու փորձւած: Մտադիր էինք յատուկ
հսկողութիւն նշանակել մեծ իշխանի վրա
եւ ասկա սպանել փողոցում:

Հսկելու համար պէտք է կառապաններ
նշանակւէին. իսկ կառապաններ պէտք է
լինէին Օպանասն ու Կալեանելը:

Եոյեմբերի սկզբին՝ ես, Բրիլիանդը,

Կալեաեւն ու Օպանասը ճանապարհ ընկանք Ռուսաստան։ իսկ մի քանի օրից յետոյ մենք արդէն Մոսկվայում պատահեցինք իրար։ Մեծ իշխանի դէմ գործն սկսելիս, մենք օգտաեցինք Պէվէյի դէմ կատարւած փորձերից։

Մոսկվայի կօմիտէն մեզ արամագրելի պիտի անէր մեծ իշխանի մասին արժեքաւոր տեղեկութիւններ, բայց մենք գեղադասեցինք չօգտաել նրանցից, որպէսզի ոչ մի յարաբերութեան մէջ չմտնենք տեղական գործիչների հետ։ Նրանց գաղտնապահութեան եւ յեզ. փորձառութեան մասին ոչինչ յայտնի չէր եւ մենք երկիրդ էնինք կրում, որ նրանց հետ յարաբերութիւն պահպանելիս, կարող էնիք ոստիկանութեան ուշադրութիւնը հրաւիրել մեր ձեռնարկի վրա։ Այդ էր պատճառը, որ Մոսկվայի կօմիտէն երկար ժամանակ չը գիտէր Ահարեկիչ Մարմնի անդամների քաղաք ժամանէն ու գործի ձեռնարկեւմ։ Մեր յոյն ամբողջովին մեր վրա դնելով, կօմիտէից անկախ, սկսեցինք մեր հետապնդումը մեծ իշխանին։

Ամենից հարկաւոր էր իմանալ թէ ո՞ր տեղ է ասքում մեծ իշխանը։ Այդ հասարակ բանը զիտէր Մոսկվայի իւրաքանչիւր բնակիչ, սակայն մեզանից եւ ոչ մէկը

մոսկվայեցի չէր։

Երկար ժամանակ տատանւում էինք—մէծ իշխանի ասլարանքներից ո՞րն ընտրել մեր զիտողութեան յենակէտ... Տւէրսկի, Նիքոլաեւսկի թէ՞ Նեսկուչնի փողոցում նշանակէինք մերոնց։

Մոսկվայի մասին տեղեկութիւններ պարունակող զրքերում ոչինչ չգտանք։ Ուրիշներից հարցնելն անյարժար էր։ Կարելի էր ի հարկէ, կօմիտէից հարցնել, բայց մենք այդ էլ չը ուցինք անել յայտնի պատճառով։

Օպանասը վճռեց այդ խնդիրը։

Նա բարձրացաւ իվան Վելիկի (Յովհաննէս մէծ) կոչւած զանդակատունը, այնտեղ ուղեցոյց պահպանից մանրամասն տեղեկութիւններ հարցրեց քաղաքի նշանաւոր հիմնարկութիւնների մասին, ի միջի այլոց խնդրեց նաև ցոյց տալ մէծ իշխանի ստպարանքները։

Պահպանը ցոյց տեսց Տւէրսկի պարանքը եւ աւելացրեց, որ այժմ մեծ իշխանն այնտեղ է ապրում։ Այդ ձեւով իմացանք մեզ հարկաւոր հասցէն։ Այնուհետեւ զին լրագիրներ քրքրելով, մօտաւուալէս կարողացանք որոշել մեծ իշխանի ընդունելութեան օրերը։ մեզ հարկաւոր

էր նաեւ նրա տանից դուրս գալու ժամեւ
ըւ:

Կալեաեւը գնաց Մինսկ քաղաքը, որ-
պէսզի կերպարանափոխի—այսինքն ա-
զայից գառնայ հասարակ գիւղացի:

Եսու Օպանասը մնացինք Մոսկվայում:
Մէնք յոյս ունէինք մեծ իշխանին տեսնել
նոյեմբեր 26-ին, որովհետեւ այդ օրը
Գէօրգիեւսկի տօնի պատճառով, նա պի-
տի գնար քաղաքային մանէժը(*). իսկ
այնտեղից էլ Կարմիր-Զօրանոցը—կրէմլ:

Այդ մեզ յաջողւեց եւ դա մեր գիտո-
ղութեան առաջին արդիւնքն էր: Նո-
յեմբերի 27-ին, Օպանասն ալ Մինսկ գլ-
նաց կերպարանափոխելու Կալեաեւի նը-
ման:

Դեկտեմբերի սկզբին՝ նրանք երկուսն
էլ վերադրձան ձիեր ու սահնակներ ա-
ռած ու գրւեցին իրեւ շուկայի կառա-
պաններ:

Ես չի կասկածում, որ Կալեաեւն իր
պաշտօնը լաւ կկատարի. փողոցի առեւ-
տուր անողի իր անցեալ փորձն անշուշտ
կօդնէր նրան նաեւ լաւ կառապան լինելու

(*) Քաղաքային ընդարձակ սրան՝ ժո-
ղովրդական հանդէսների, ձիարշաների
եւ այլ գւարնութիւնների համար: Ե. Թ.

մէջ, բայց Օպանասն անփորձ էր: Բացի
այդ՝ նա իրեւ ունեւոր ընտանիքի զա-
ւակ, սովոր չէր հասարակ աշխատանքի
եւ ոչ էլ կեանքի դժւարին պայմաննե-
րին: Զնայելով դրանց, նա շատ շուտ
հաշուեց ու յարմարւեց իր նոր գրու-
թեան հետ: Կալեաեւն ու Օպանասը միա-
ժամանակ գնեցին ձիեր ու սահնակներ և
համարեա թէ նոյն արժէքի: Նոյն օրն էլ
նրանք երկուսով, ենթարկւեցին ոստիկա-
նական քննութեան թէեւ քաղաքի տարրեր
մասերում: Իրաւունք ստանալուց յետոյ,
նրանք գուրս եկան շուկայ իրր կառա-
պաններ ու գործի կացան:

Արտաքին կողմից՝ նրանք զգալի կեր-
պով տարբերուում էին իրարից: Օպանասի
սահնակը հին էր, բանեցրած. սահնակի
ծածկոցը մաշւած, քրքրւած. ձին լզար,
քոսոտ. Օպանասը ստորին կառապանի
հագուստ էր հագել: Կալեաեւն ընդհակա-
ռակը՝ հարուստ կառապանի բոլոր վայե-
լու ձեւերն ունէր: Առողջ, ուժեղ, գեղե-
ցիկ ձի, նոր, սիրուն սահնակ, մուշտակէ
տաք ծածկոցով:

Ինքը, Կալեաեւը կապեր էր մետաքսէ
կարմիր գոտի, որ յատուկ է հարուստ
կառապաններին:

Նայելով նրա չքեղ արտաքինին, դժւար

չէր գուշակել թէ այդ մարդը ձիուն եւ
սահնակի սեփականատէր կառապանն է :

Պանդոկներում նրանց տեղերը փոխում
էին : Օպանասն առանձնացած կեանք էր
վարում, ոչ ոքին չէր մօտենում, ոչ ոքի
հետ չէր խօսում . կառապանների հար-
ցերին—ո՞վ է ինքը, ո՞րտեղացի է—նա
աւելորդ էր համարում պատասխանել:
Կիրակի օրը բացակայում էր պանդոկից,
ձի պահելու եւ ուրիշ թեթեւ ծառայու-
թիւնների համար նա վարձել էր մէկին:
Դռնապանի հետ շա՛տ սառն էր վարւում
ու զգալ էր տալիս նրան, որ ինքը փող
ունի եւ նրա քայլը չէ :

Իր այդ վարժունքով, մանաւանդ կար-
ծեցեալ հարստութիւնով նա վայելում էր
կառապանների ու զանապանի ակնածու-
թիւնը :

Բոլորովին ուրիշ գիրք էր տել իրան՝
կալեաեւը :

Նա իրեն ցոյց էր տել իրը ամօթխած
ու վախկոտի մէկը : Երկա՛ր ու բարակ
պատմութիւններ էր անում իր անցեալ
ծառայութիւններից Պետերբուրգի ճաշա-
րաններից մէկում — ի հարկէ հնարովի
պատմութիւններ : Պանդոկում նա յայտնի
էր սաստիկ աստեածավախ ու կրօնամոլ.
ծախքերի մէջ ժլատ էր եւ միշտ էլ ալը-

տընջում էր, որ շահ չկայ, որ ինքը վը-
նաս է անում : Երբ նեղն էր ընկնում ի-
րեն ուղղած հարցերինպատասխանելուց,
իսկոյն այնպէս էր ձեւանում, որ ինքը
լաւ չի հասկացել եւ առհասարակ խելքը
տեղը չէ, թեթեւ է ...

Պանդոկում նրան ատում էին իր ժլատ
բնաւորութեան համար . իսկ երբ տեսան
նրա անօրինակ ջանասիրութիւնը, նրա բա-
րեխիղճ աշխատանքը, այնուամենայնիւ
ոկսեցին յարգել նրան :

Իր ձիուն ինքն էր խնամում, մաքրում,
իր ձեռքով լւանում, մաքրում էր սահ-
նակն ամէն օր : Փողոց էր դուրս գալիս
ամենից շուտ եւ վերադառնում էր պան-
դոկ ամենավերջը :

Մի խօսքով՝ կալաեւն էլ, Օպանասն էլ
նոյն նպատակին էին ձդտում տարբեր ճա-
նապարհներով :

Նրանց ընկեր-կառապանները անշուշտ
չէին կարող կասկածիլ որ դրանք սովոր-
ական գիւղացիներ չեն, այլ նախկին
ուսանողներ ու ԱՀարեկիչ Մարմնի ան-
դամներ, որոնք հետամուտ էին լինում
մեծ իշխանին : Գործի մէջ նրանք մրցում
էին իրար հետ :

Ինչպէս Պլէվէյի սպանութեան ժամա-
նակ, նոյնպէս եւ այստեղ, կալաեւը ու

բոշւած ժամերից դուրս, օրւայ մնացած
մասն էլ փողոցում կանգուն դիտում էր,
առաջնորդւելով իր սեփական խոհերով։
Մէկից աւելի անդամ նա տեսնում էր մեծ
իշխանին փողոցում նոյն ժամերին, միւ
եւնոյն ճանապարհով կառքով անցնելիս,
որով հնարաւոր եղաւ ճիշտ կերպով որու-
չել մեծ իշխանի տանից դուրս գնալու,
կամ պաշտօնատեղից վերադառնալու ա-
մենօրեայ ժամերը։

Օպանասն էլ կալեաեւից անկախ, իր
ծրագիրն ունէր, որ գործադրում էր ինք-
նուրոյն կերպով։ Բայց նա աւելի քիչ
էր երեւում փողոցում, քան թէ կալեա-
եւը։ Տրամարանական ճիշտ հետեւողու-
թեամբ, նա կարողանում էր զարմանալի
կերպով դուշակել, որ այսինչ ժամին մեծ
իշխանը պիտի անցնի դիցուք Տւէրսկի
փողոցով։ ճիշտ այդ ժամին էլ նա կանդ-
նած սպասում էր Տւէրսկի փողոցում ու
անպատճառ հանդիպում էր մեծ իշխանի
կառքին։

Այդպիսով նրա ու կալեաեւի դիտողու-
թիւնները մէկը միւսին լրացնում էին։

Ամենաղժւարը, սակայն, մեր կանոնա-
ւոր տեսակցութիւններն էին—անդլիացի
ճարտարապետի (այն ժամանակ ևս ապ-
րում էի անդլիացի ճարտարապետ Զէմս-

Գալլի անցադրով) եւ հասարակ կառա-
պանների տեսակցութիւնները։

Այդ հանդիպումներն էլ տարբեր ձևով
էին տեղի ունենում։

Կալեաեւը գերազառում էր սահնակի
մէջ տեսնեւել, թէեւ կառապանի նստած
տեղից անյարմար էր խօսել, մանաւանդ
սաստիկ ցրտերն արդիում էին երկար
խօսակցութեան։ Շատ քիչ անդամ եւ
այն էլ կիրակի օրերը, հազիւ յաջողւում
էր կալեաեւի հետ տեսակցութիւն նշանա-
կել Բակստովի թէյարանում, որ գտնը-
ւում էր Սուլիարեկի աշտարակի մօտ։
Դրա համար կարեւոր էր պանդոկից հե-
ռանալու ուեէ առիթ որոնել նախապէս։

Այդ տեսակցութիւններն իսկապէս, մեղ
համար միւմի տօնախմբութիւններ լինէ-
ին կարծես

Այդպիսի դէպքերում հնարաւորութիւն
ունէինք երկու-երեք ժամ միասին լինել,
խորհրդակցիւ, մանրամասն դատել ու
կշռել մեր ապագայ անելիքն ու գործի
ընթացքը։

Օպանասը փողոցում համարեա՛ չէր
տեսնում ինձ հետ. անյարմար էր հա-
մարում նաեւ պանդոկում տեսնել։

Իի օրւայ երեկոները, հազնում էր տօ-
նական զգեստը, դուրս էր զալիս պանդու-

կից ու մենք հանդիպում էինք իրար կամ
կըկէսում, կամ քաղաքային մանէժում
եւ կամ թէյատներից մէկում:

Շատ սառն ու խաղաղ դէմքով՝ նա
պատմում էր մէծ իշխանի մասին: Սա-
կայն, ինչպէս կալեաեւի, նոյնպէս եւ
նրա արտաքին խաղաղութեան տակ թագ-
նըւած էր այն անզուսալ ողեւորութիւնն
ու անհամբերութիւնը, որ յատուկ է
այլօրինակ ծանր, հոգեմաշ աշխատանք-
ների ժամանակ... Նրանից երկուքի հետ
ալ քննում էի մեր ընդհանուր ձեռնարկի
ամէն մի քայլը:

Կալեաեւն իր կեանքից պատմում էր
հետեւեալը՝

— Ես ճեռք եմ բերել Պատօւեան նա-
հանգի մի հասարակ գիւղացու—Յովսէփ
Կովալլիի անցագիր. յատկապէս զոհհիկ
գիւղացու անցագիր վերցրի նրա համար,
որ իմ լեհական առողանութիւնն աննկա-
տելի մնայ:

Զէ՞ որ կեանքի մէջ յաճախ պատահում
է քարս զուգագիպութիւններ, ինձ հետ
էլ մի այլպիսի բան պատահեց: Մի երե-
կոյ մեր գոնապանը հարցնում է ինձ.

— Ո՞ր նահանդիցն ես զու:

— Պատօւեան. պատասխանում եմ նը-
րան:

— Մի՛թէ...ուրեմն մենք հայրենակից-
ներ ենք, չէ՞ որ ես էլ եմ Պատօւեան նա-
հանգից. ու յետոյ շարունակում է:

— Ո՞ր գաւառից:

— Ուշիցկի:

Դոնապանն ուրախացած յայտնում է որ
ինքն էլ նոյն գաւառացի է ու էլի մի քա-
նի հարցեր տալիս.

— Ո՞ր գաւառամասից, ո՞ր գիւղից,
ճանաչված ես, արդեօք, Նէկովկա գիւ-
ղը, Գոլոդյայովկա տօնավաճառը եւյլն...

Կեղծիքի մէջ դժւար էր ինձ բռնել, ու-
րովհետեւ նախքան անցագիր ստանալս,
գնացի Ռումիանցեւի ընթերցարանը, ու-
րոնցի ու գտայ այնտեղ Ուշիցկի գա-
ւառի մասին լիակատար տեղեկութիւն-
ներ: Վստահ այդ տեղեկութիւնների վրա,
ևս ծիծաղցի զոնապանի միամիտ հար-
ցերի վրա ասելով.

— Ի հարկէ ճանաչում եմ եւ իմ կող-
մից մի քանի հարցեր էլ տւի:

— Իսկ զու եղել ես քաղաքում, այնտեղ
մի եկեղեցի կայ, տեսե՞լ ես... եւ բանից
զուրս եկաւ, որ ես աւելի ճիշտ տեղեկու-
թիւններ ունեմ նրա հայրենիքի մասին
քան թէ ինքը՝ գոնապանը:

Բոլորովին այլ բան էր պատմում Օպա-
հասը:

— Պանդոկի բակում կանցնած եմ, մօստենում է ինձ մի բոկոտն թափառաշրջիկու հարցնում է.

— Դու ո՞ր երկրացի ես, հայրենակից*)...

Ես նայեցի նրան ոտքից գլուխ ու հեղանելու համար ասացի.

— Պօրտ-Արտուրից :

Նա շշմեց. զարմացած նայում է ինձ վրա ապուշի հայեցքով.

— Մի՞թէ Պօրտ-Արտուրից ես դու:

Առանց ուշադրութիւն գարձնելու նրա վրա, գլուխս կախ իմ ճին եմ լծում:

Մի փոքր կանգ առնելուց յետոյ, ականչի յետեւը քորեց ու շարունակեց.

— Հապա ինչո՞ւ ես ածիւած...

— Տեսնում ես որ մազերս կառապանների մազերի նման խուզւած չեն, որովհետեւ ես զինուոր եմ եղել, հիւանդանոցում տիֆով հիւանդ պառկած եմ եղել. իսկ այժմ էլ ապուշի հետ եմ խօսում...

Նա կրկին ականջի յետեւը քորեց աւելացնելով.

*) Ռուսների մէջ շատ տարածւած եւ ընթանուրի կողմից ընդունած սովորութիւն. անծանօթները դիմում են իրար «Զէմլեակ» (հայրենակից) բառով: Ծ. Թ.

— Տեսնում եմ թէ դուն ի՞նչ թռչուն ես... այո՛, Պօրտ-Արտուրում զինուոր ես եղել, հիւանդանոցում պառկել ես... ու իրան-իրան, քթի տակ, մրմռալով հետացաւ:

Այն օրւանից դէսը ինձ տեսնելիս, խոսնարհ գլուխ է տալիս:

Այդ օրերում Մոսկաւ եկաւ կենդր. կօմիտէի անդամ Սէրպէեւը: Որպէս զի ուեւէ թիւրիմացութիւն չծագի, որոշեցի նրա միջոցով իսօնել Մոսկայի կօմիտէի հետ, վերը յիշած թռուցիկի առթիւ:

Մեծ նախազգուցութիւններ ձեռք առնելուց յետոյ, ես հանդիպեցի կօմիտէի անդամ Վոլոդինին, որը մի ժամանակ գործում էր Ահարեկիչ Մարմնի մէջ:

Հարցրի Վոլոդինին.— Մոսկայի կօմիտէն մտադի՞ր է, արդեօք, սպանել մէծիշխանին:

— Այո՛, մտադիր է եւ պատրաստում է:

— Մոսկայի կօմիտէն աեղեկութիւններ ունի՞ մէծ իշխանի կեանքի, նրա նիստու կացի մասին, հետամուտ լինո՞ւմ է նրան...

Վոլոդինը մանրամասն պատմեց բոլոր այն նախապատրաստութիւնները, որ ձեռն ասրկւած էր կօմիտէի կողմից:

Անշուշտ կօմիտէն չպիտի կարողանար սպանել մեծ իշխանին բայց մեզ կարող էին խանդարել:

Իմ կարծիքը ես յայտնեցի վօլոգինին եւ յանուն Ահարեկիչ Մարմնի խնդրեցի ընդհատել կօմիտէի դիտողական աշխատանքները:

Հետեւեալ օրը վօլոգինը ձերբակալեց կօմիտէական գործերով եւ ես մի առելորդ անդամ եւս համոզւեցի թէ որքան մեծ նշանակութիւն ունի տերբորական ձեռնարկների տեխնիքական առանձնացումները:

Վօլոգինին, անշուշտ, լրտեսած կլինէին ինձ հետ տեսնելու օրը ու եթէ լրտեսներն աւելի ճարպիկ եւ ուշադիր դանէին կարող էին իմ հետքը դանել, ինձ հետ միասին նաև հետապնդել մեր սակաւաթիւ կազմի բոլոր անդամներին:

Մօտաւորապէս այդ օրերին, Մոսկա եկաւ Ալեքսանդրովիչը: Ես նորից աշխատեցի համոզել նրան, որ թողնի իր որոշումը, չմասնակցի մեր ձեռնարկին. բայց նա ինչպէս Բագւում, նոյնպէս եւ այստեղ, յամառ կերպով պնդում էր իր որոշման վրա:

Այս անդամ էլ նա ինձ վրա տերբորական գործին անկեղծ նւիրւած մարդու

տպաւորութիւն թողեց: Մինչեւ այսօր էլ կարծում եմ, որ նրա վերաբերմամբ չէի սխալել այն ժամանակ:

Որոշեցինք, որ Ալեքսանդրովիչը փողոցում առեւտուր անողի դերում հսկէ մեծ իշխանի վրա: Բայց այդ բանը նրան չէր յաջողւում. նախ՝ անփորձ էր եւ երկրորդու նրան խանգարում էր իր կարծատեսութիւնը: Մինչեւ վերջն էլ նա չկարողացաւ առեւտրական դառնալ:

Առանց ասլրանքի եւ առանց բարախի, զիւղացու շորերով, կալուժուկի դռների մօտ կանդնած, նա հսկում էր մեծ իշխանին: Մի քանի անդամ յաջողւեց նրան մեծ իշխանի կառքը տեսնել եւ այդքանը բաւական էր որ նա կարողանար սպանութեանը մասնակցիլ:

Գօրա Բրիլլիանտը, որն ապրում էր երրեմն Մոսկայում, երբեմն էլ գաղտնապահութեան պահանջներով, Նիժնի-Նովգորոջում, չատ էր ճանձանում ու գըժուցում իր անդորդութիւնից: Խոկապէս նրա դերը բացասական էր: Առանձնութեան մէջ նա զբաղւած էր միմիայն դիւնամիս պահելով: Մէն-մինակ, ինքն իր մէջ կեղրոնացած, նա սպասում էր այն ժամին, երբ իրանից աշխատանք պիտի պահանջէին:

Յունվարի 10-ին, առաջին լուրերն ըստ ացւեցին, Պետերպուրդի դէպքերի մասին: Դրանից առաջ էլ տեղի էին ունեցել Մոսկավյալ գործադուները: Ի միջի այլոց, գործադուն էր յայտարարւել նաև Բրօմելի գործարանը, որը դանւում էր մեծ իշխանի կացարանի ուղիղ դէմ ու դէմը: Դրա պատճառով, երեւի, մեծ իշխանը, գիշերով տեղափոխւեց Նիսկուչնից Կրէմլ:

Մեր աշխատանքները նորից խանգարւեցին մեծ իշխանի տեղափոխութեամբ: Նեսկուչնի ապարանքի վրա կատարւած մեր հակողութիւնը լաւ հետեւանքներ էր տւել, մենք արդէն պատրաստում էինք գործի անցնելու, այժմ ստիպւած էինք թողնել մեր մտադրութիւնն ու նոր հըսկողութիւն նշանակել: Մեծ իշխանի տանից գուրս գալու կանոնաւոր ժամերի հետքը կորցրինք: Ակզբում Տւէրսկուց և ապա Նիսկուչնուց նա կանոնաւոր յաճախում էր Կրէմլ, իր ընդհանուր զօրքերի գլխաւոր հրամանատար:

Կրէմլ տեղափոխւելով բնականարար ընդհատում էին նրա կառքով ճանապարհորդութիւնները:

Ստիպւած էինք խարխափելով որոշ նումներ կատարել Կրէմլում: Նրան հե-

տամուտ լինելու համար մենք դիրքեր նըշանակեցինք Տրօիցկիյ դարպաներին կից, պատմական թանգարանի մօտ:

Մի քանի օրից յետոյ նորից կարողացանք որոշել մեծ իշխանի տանից գուրս գալու ժամերը—սովորական օրերին, ժամը 3ին նա զնում էր Տւէրսկի, անցնելով Նիկոլսկի եւ Իվերսկի գոների մօտից, իսկ ժամը 5-ին, վերդառնում էր Կրէմլ:

Միեւնոյն բանը կրկնեց եւ յաջորդօրը:

Միւս կողմից՝ լրագիրները հաղորդեցին, որ Գոֆմէյստեր Բուլիգինը—որը բարձրագոյն կամքով նշանակւած էր Մոսկավյալ նահանգապետութեան եւ քաղաքապետութեան կարեւոր գործերը կարգադրողի պաշտօնով—նշանակւել է: Ներքին գործերի նախարար ու արդէն մեկնել է Պետերբուրգ: Որովհետեւ գեռ ոչ ոքին չէին նշանակել մենք Ենթադրեցինք, որ այդ պաշտօնի գլուխը կանցնի մեծ իշխանը:

Նկատի ունէինք, որ այդ հանգամանքի պատճառով նրա տանից գուրս գնալուց աւելի կարեւորութիւն էր ստանում: Պարզ էր, որ մեծ իշխանը գնալու էր Տւէրի պալատը իր քաղաքացիական պաշտօնատեղին, զրա համար էլ ստիպւ-

ւած էր ամէն օր կանոնաւոր յաճախէլ,
դոնէ պիտի յաճախէր այնքան ժամանակ,
որքան որ տեւելու լինէր իր նոր պաշտօնը :

Մէր հսկողութեան դիրքը փոխազրեացինք Տէկուի պալատը : Մէր ենթագրութիւնները կատարելապէս արգարացան : Յիրաւի մեծ իշխանը գնում էր Տէկուի պալատը, գնում էր նա օրամէջ եւ անպատճառ տօներին յաջորդող օրերը . նըրան հետեւում էին երկու լրտեսներ սեւ ձիերի վրա նստած :

Ի նկատի ունենալով, որ մեծ իշխանի տանից զուրս զալու ժամերը ստուգած էին ու որոշ, արտաքին նշաններն էլ շատ լաւ յայտնի էին մեղ տուաջուց : Յունվարի կիսից սկսեցինք մահափորձի պատրաստութիւնները տեսնել :

Եթէ Պէտէյի գործը կապել-միացրել էր կազմակերպութիւնը այնպիսի բարձր ոգով, որին Սազանօվը վերջերում անւանում էր «եղբայրական ողի», այդ գէպւքում Մոսկւայի մեր գործը աւելի եւս ամրապնդեց այդ եղբայրական կապը :

Առանց չափազանցելու կարող եմ ասել, որ Ահարեկիչ Մարմնի Մոսկւայի բաժանմունքի բոլոր անդամները—Ալեքսանդրովիչն էլ մէջը հաշւած—կազմում էին

մի մտերիմ ընտանիք : Այդ մտերիմ ընկերակցութեան արգելք չէր լինում կարսծիքների ու բնաւորութիւնների ասրբեարութիւնը : Իւրաքանչիւրի անհատական առանձնայատկութիւնն աւելի եւս նպաստում էր թերեւս :

Զնայելով մեր խմբակի վորքը թւին, այնուամենայնիւ հետամուտ լինելու գործը առաջ էր գնում յաջողութեամբ :

Շատ կարճ ժամանակոց յետոյ, մենք արդէն գիտէինք մեծ իշխանի տանից դուրս գալու ճիշտ ժամերը :

Կալեաելը մեծ իշխանի կառքի, ճիերի եւ բոլոր նշանների մասին այնքան մահրամասնութիւններ էր պատճում, ինչպէս մի ժամանակ լաւ գիտէր Պէտէյի կառքի մասին :

Մեծ իշխանի կառքի աչքի ընկնող գծերն էին—ճիերի սպիտակ երսանակները ու կառքի լապտերների վայլուն, կաթնանըման լոյսը : Այդպիսի լապտերներ, ամբողջ Մոսկւայում, միմիւայն մեծ իշխանն ունէր, մէկ էլ նրա կինը—մեծ իշխանուհի Ելիզաւէտան :

Այդ հանգամանքը դժւարացնում էր մեր ձեռնարկը : Կարող էինք մեծ իշխանի կառքը շիոթել մեծ իշխանուհի Ելիզաւէտայի կառքի հետ, որովհետեւ երկուսի կառքեւ

րըն ալ լուսաւորւած էին նոյն պայծառ
լոյս արձակող լապտերներով։ Այդ սխա-
լից խուսափելու համար, կալեաեւն ու Օ-
պանասը լաւ ուստումնասիրեցին կառա-
պաններին, որոնցից կարելի եղաւ տար-
բերել իշխանի եւ իշխանութու կառքերը։
Բացի այդ՝ մեծ իշխանը յաճախ երթեւեւ-
կում էր բաց կառքով։

Տանից գուրս զալու ժամերը ճշտելը
բաւական չէր, հարկաւոր էր զիտենալ
նաեւ թէ ե՞րբ, ո՞րտեղ է գնում։

Մի քանի օրից յետոյ այդ էլ իմացանք։
Տէքսկի փողոցում՝ գեներալնահան-
գապետի բնակարանում ապրած ժամա-
նակ, օրւայ որոշ ժամերին—այսինքն ա-
մէն օր ժամը 3-ին—նա գնում էր Կրէմլ,
Դիօքտովի փողոցով, իսկ ժամը 5-ին նոյն
փողոցով վերադառնում էր։

Այդպիսով՝ մինչեւ ծննդեան տօները,
մեր զիտողութիւնները, ընդհանուր դը-
ծերով վերջացած կարելի էր համարել,
թէեւ այդ օրերին մեծ իշխանը ուղեւոր-
ւեց Պետերբուրգ։ Այդ մասին նախազգու-
շացուցի Դորա Բըլլիանտին, որը պայ-
թուցիկ նիւթերն էր պահում Նիմինի-Նով-
գորոսում։

Դեկտեմբերի սկզբին ես դնացի Բագու,
որպէսզի խօսեմ Ալէֆի յանձնարարած

իքսի հետ։ Բագւի տեղական մարմնի ան-
դամներից իմացայ, որ իմ որոնած իքսը
քաղաքում չէ և դժւար թէ նա ընդունակ
լինէր մահափորձերի մասնակցելու։ Նը-
րանք իրենց կողմից առաջարկեցին Բագւի
Ահարեկիչ Մարմնի անդամ Ալէքսանդրո-
վիչին։

Ինձ ասացին, որ Ալէքսանդրովիչը վա-
զուց խնդրում է ընդունել իրան Ահարե-
կիչ Մարմնի մէջ եւ որ իրանք շատ լաւ
ճանաչում են նրան։ Տեսնեցի նրա հետ։
Միջին հասակից բարձր, ակնոցաւոր, բա-
րի ու խոցոր աչքերով մի մարդ էր Ա-
լէքսանդրովիչը։

Մեր առաջին տեսակցութեան ժամա-
նակ, նա յայտնեց ինձ, որ ինքը ցանկա-
նում է տերբորների մասնակցել։

Որպէսզի համոզւեմ թէ որ աստիճանի
անկեղծ է նրա ցանկութիւնը, ես իմ կող-
մից աշխատեցի ամէն կերպ յետ կանգնե-
ցընել իր զիտաւորութիւններից, թւելով
այդ գործի հետ կապւած դժւարութիւն-
ները։

— Տերբորներին պէտք է մասնակցէ
այն մարդը միայն, ասացի նրան, որը հո-
գեպէս անկարող է խաղաղ աշխատանքնե-
րի մասնակցելու և որ երբէք չափած է ըշ-
տապել այդ տեսակի որոշում կայացնել։

Ալեքսանդրովիչը հաստատ մնաց իր ու
բոշումին։ Նա ինձ վրա անկեղծ ու հա-
մողւած մարդու տպաւորութիւն թողեց։

Մի քանի անգամ տեսակցելուց յետոյ
պատւիրեցի անմիջապէս ճահապարհւել
Մուկւա։

Բազւից վերադառնալուց յետոյ՝ Կա-
լեակւն ու Օպանասը պատմեցին Հետեւ-
եալը։

Գեկտեմբեր 5-ին եւ 6-ին, Մոսկւայում
տեղի էին ունեցել ուսանողական յայտնի
ցոյցերը։ Այդ առթիւ Մոսկւայի կօմիտէն
բաց էր թողել մի թուուցիկ յայտարարու-
թիւն, որտեղ յայտնի կերպով, առանա-
ցել էր մեծ իշխանին։

Կօմիտէն, ինչպէս վերն ասացի, ան-
տեղեակ էր մեր ձեռնարկին։

Ապանալիք կարդալով մեծ իշխանին,
նա սպանելու նախաձեռնութիւնն իր վրա
էր վերցնում, իսկ մենք այդ մասին ու-
ժինչ չգիտէինք։ Ահա այդ թուուցիկին բո-
վանդակութիւնը։

— «Սօց. ։ Յեղ. ։ կաղմակերպութեան
Մոսկւայի կօմիտէն, պարտք է համարում
նախազգուշացնել, որ եթէ զեկտեմբերի
5-ի ու 6-ի նշանակւած քաղաքական ցոյ-
ցը կառավարութեան ու ոստիկանութեան
կողմից հետապնդւի նոյնակի գաղանաւ-

յին գործողութիւններով, ինչպէս մօտերս
տեղի ունեցաւ Պետերպութում, այն ժա-
մանակ՝ դադանութիւնների ամբողջ պա-
տասխանատութիւնն ընկնում է գենե-
րալնահանդապես Սէրգէյի եւ ոստիկա-
նապես Տրէսպալի վրա……

Կօմիտէն ոչ մի դժւարութեան առաջ
կանգ չի առնի, նրանց պատժելու հա-
մար»։

Այդ թուուցիկը գուրս զալուց յետոյ
մեծ իշխանը վերադարձաւ Պետերպութ-
ուից ու անակնկալ կերպով՝ զեներալ-նա-
հանդապահտի բնակարանից տեղափոխ-
ւեց. թէ ուր—ոչ ոք չգիտէր։

Անհրաժեշտ էր որոնել նրա նոր բնա-
կարանը։

Մենք սկսեցինք հետամուտ լինել միա-
ժամանակ եւ կրէմլը, եւ Նեսկուչնի, եւ
մինչեւ իսկ՝ Հին-Բատմաննից ապարանք-
ները։

Վերջապէս Կալեակը գտաւնրա կառքը
կալուժեսկի ուների մօտ, որից եղբակա-
ցը ինք, որ մեծ իշխանն ապրում է Նիս-
կուչնի ապարանքում եւ չսիսալւեցինք։

Մինչեւ հիմա էլ չեմ կարողանում հաս-
կանակ՝ ինչին վերադրել նրա անակնկալ
տեղափոխութիւնը։ Արդե՞օք դա մի հա-

սարակ զուգադիմութիւն էր, արդե՞օք
մեր ձեռնարկի հոտն առել էին թէ՝ նրան
վախեցրել էր Մոսկւայի կօմիտէի յայ-
տարարութիւնը...

Անձամբ ես տրամադիր եմ հաւատալու-
վերջին ննթագրութեանը: Մեծ իշխանը
չէր կարող հաշւի չառնել Սոց-Յեկ. մի
կօմիտէի սպառնալիքը. իսկ Նիսկուչնի
ապարանքում, նա նրան աւելի ապահով
էր զգում քան թէ Տէկրում: Թէեւ իրա-
պէս, դրանով նրա վտանգը չլերացաւ:

Մեր գիտողութեան ասպարէզը աւելի
լայնացաւ. փոխանակ Տէկրից մինչեւ կը-
րէմլ կարճ ճանապարհի, նա ստիպւած էր
այժմ մի քանի վերստ տարածութիւն
անցնել, Նեսկուչնից մինչեւ Կալուժեան
դռները գնալու համար. իսկ այնտեղից
Մոսկւա գետի վրայով, Մեծ-Եակիմով-
կա, Պոլեանկա կամ Օրդենկա կտրել,
անցնելու համար: Այդ երկար ճանա-
պարհի վրա ամբողջ օրը կարելի էր գի-
տել ու հսկել առանց կասկած հրաւիրե-
լու:

Շա՞տ կարճ ժամանակամիջոցում, Օ-
պանասն ու կալեաեւը, կարողացան ո-
րոշել որ մեծ իշխանը շարունակում է
կրէմլ գնալը թէեւ տարբեր օրերում եւ

տարբեր ժամերին, բայց, համարեա թէ
միւնոյն ճանապարհով — Բոլշաեա-Պօլ-
եանկա վորոցով:

Մեր կանոնաւոր դիտողութիւնը խան-
գարում էր մեծ իշխանուհին, որ համար-
եա ամէն օր, նոյն ճանապարհով անց-
նում էր եւ որի կառքը—ինչպէս արդէն
ասացի—բոլորովին նման էր մեծ իշխանի
կառքին:

Մոսկւայի մահավորձի բացառիկ յա-
ջողութիւնը, ես վերագրում եմ Ահաբե-
կիչ Մարմնի անդամների մէջ գոյութիւն
ունեցող համերաշխութեանն ու ընկերա-
կան սերտ կապերին:

Օպանասն իր բնաւորութեամբ յիշեցը-
նում էր Շէկյուրին^{*)}):

Շէկյուրի նման նա էլ լոիկ, անթա-
փանց ու պաղարիւն մարդ էր:

Երբեմն նրա լուսութիւնը փոխւում էր
մոռայլութեան ու գեկամակութեան եւ
նրանք, որոնք բաւականաշափ ծանօթ չէին
Օպանասի բնաւորութեանը, այդ մոռայլ ու
անհամբոյր կեղեւի տակ անկարող պիտի
լինէին տէսնել նրա մեծ հոգին ու առանձ-
նայատուկ դէմքը: Կալեաեւը Մոսկւայում

^{*)}) Պէկվէյի գործի մէջ մասնակցողներից մէկը;

էլ նոյնն էր մնացել, ինչպէս որ էր Պետերպուրգում: Բայց կարծես թէ նա ըզդում էր իր մօտալուտ մահը: Այդ նախազգուշացումն անդրադառնում էր մշտական ջղային դիւրագրդիու արտայայտութիւններով:

Գուցէ նա ոչ մի անդամ այնքան տաք սէր չի զգացել, այնքան ջերմ կերպով չի փարել կազմակերպութեանը, որքան ըզդում էր իր մահւան նախընթաց օրերում:

Վերջին անդամ տեսայ նրան կառապանի դերի մէջ, յունվարի երկրորդ կէսին, երբ արդէն տերըսը վճռւած էր:

Մենք երկուսով նստած էինք Մոսկվացետի միւս կողմն ընկած մի յետ ընկած թէյարանում: Նա սաստիկ նիշարել էր, միքուքն աճել-երկարել, իսկ նրա փայլուն աչքերը փոսն էին ընկել: Հազել էր հասարակ գիւղացու կապոյտ դոյնի հագուստ, վիզը փաթաթել էր բրդէ կարմիր շալով, ճիշտ եւ ճիշտ կառապանի նման ծպտւած:

— Շա՞տ եմ յոգնել—սասում էր նա—յոգնել եմ ջղերով: Դիտե՛ս, կարծում եմ, որ այլեւս անկարող եմ... Բայց ի՞նչ երջանկութիւն կլինէր եթէ մենք յադը թէինք... Եթէ վլագիմիրը Պետերըուրդում, իսկ Սէրգէյը Մոսկուայում... Ես

այդ երջանիկ օրին եմ սպասում: Երեւակայի՛ր, յուլիս 15-ը եւ յունվար 9-ը եւ յետոյ երկու դործ միաժամանակ, իրար յետեւից... Այդ արդէն կլինէր իսկական յեղափոխութիւն, ափսո՞ս, որ ես չպիտի տեսնեմ... Օպանասն աւելի բազդաւոր էքան թէ ես—շարունակում է նա մի ըուսէ լուելուց յետոյ,— նա կարողանում է սառնասիրաց աշխատել, իսկ ես չեմ կարող: Ես այն ժամանակ կհանդսատանամ, երբ Սէրգէյն սպանւած կլինի: Ի՞նչ լաւ լաւ կլինէր, եթէ Եգորը (Սաղամօֆ) մեզ հետ լինէր... Ի՞նչ ես կարծում Եգորն ու Գերջունին (բանտում) կլսե՞ն մեր արածը: Կլսի՞՝, արգեօք, եւ Շլիսսերուրգը:*) Դու զիտեն, որ ինձ համար անցեալ չկայ, բոլորը ներկայի մէջն է: Միթէ կարծո՞ւմ ես Ալէքսէյը**:*) մեսել է, կարծում ես, որ Եգորը Շլիսսելլա՞րգումն է... — ո՞չ, նրանք մեզ հետ ապրում են եւ մի՞թէ զու չես զգում նրանց ներկայութիւնը... — իսկ եթէ անյաջող անցնի... զիտես

*) Տաժանակիրների յաւիտենական տան ջարան-քանտը Պետերբուրգում, որտեղ ընկենողը մինչեւ մահ մնում է այնտեղ, ենթարկւելով անասելի զրկանիների:

Ծ. Թ.

ի՞նչ, այն ժամանակ, իմ կարծիքով,
եապօնացու նման . . .

— ինչպէս թէ եապօնացու նման, հար-
զըրի ես :

Նա սեղանի վրայով կռացաւ դէպի ինձ
ու շըռկով ասաց .

— Պատերազմի ժամանակ եապօնացի-
ները անձնատուր չէին լինում :

— Յետո՞յ :

— Նրանք իրենց կեանքին վերջ էին տա-
լիս խարակիրի անելով :

Այդպիսի մոայլ տրամադրութեան մէջ
էր կալեաեւը, մեծ իշխան Սէրգէյի սպա-
նութիւնից առաջ :

II

Յունվարի վերջերին Կալեաեւը սահնակն
ու ձին ծախեց ու գնաց Խարկով, որպէս-
զի իր կառապանական կեանքի հետքը կոր-
ցընի, նոր անցագիր ձեռք բերի ու վերա-
դառնայ :

**) Ալ. Պոկոտիլովը նահատակւեց
մարտ 1ին 1904 թ., Պետերբուրգի «Ակ-
վերթիա, նօմերա» հիւրանոցում, ոռւմբի
պայքիւնից :

Ե. Թ.

Ահա թէ ինչ էր գրում, յունվարի 22ին,
Խարկովից :

«Իմ շուրջը, ինձ հետ ու իմ մէջն է
այսօր փայլուն, փաղաքչող արեւը: Թը-
ւում է թէ էութիւնս կաշկանդող ձիւն ու
սառոյցը հալել է արեւի ճառագայթների
տակ: Մինչեւ այժմ կատարւածի եւ այ-
սուհետեւ կատարւելիք վիշտն ու թափի-
ծը, վհատութիւնն ու տառապանքը կորել
է անհետ: Այսօր կցանկանայի տեսնել մի
մեզմ, փայլուն երկինք, մի քիչ տաքու-
թիւն ու թերեւս անհոգ ու անպատասխա-
նատու ուրախութիւն՝ որին կարօտում է
իմ ծարաւ հոգին . . .

Հրձւանքի մէջ եմ այսօր, ինքս էլ չգի-
տեմ ի՞նչի համար: Աննպատակ, արագ
քայլերով ման եմ գալիս փողոցները, նա-
յում եմ արեւին, նայում եմ մարդկանց
ու ինքս ինձ վրա զարմանում — ի՞նչպէս
կարելի է այդքան հետ կերպով մոռանալ
ձմեռւայ ծանր, մտահոգ տպաւորութիւ-
նը, իսկ այժմ անհոգ, ուրախ վայելել
դարնան արեւելի ջերմ ճառագայթները . . .

Ընդամենը մի քանի օր առաջ, ուժաս-
պառ եղած, թւում էր թէ ահա վացր կը-
ընկնեմ. իսկ այսօր ինքս ինձ զգում եմ
առողջ ու կազզուրւած . . .

Զծիծաղէք, եթէ ասեմ՝ որ դրանից ա-

ւելի վատթար դրութեան մէջ էի ընդամեն
նը մի քանի օր առաջ :

Կան բաներ, որոնց մասին անհնարին է
պատմել: Մարդուս հոգին ու մարմինը
պաղում է, անյոյս ու անհամբոյր՝ է
դառնում թէ ինձ համար եւ թէ ուրիշնե-
րի համար... Այդ ժամանակամիջոցում
հոգեկան այնքան չափ տառապահք էր կու-
տակւել, որ լինում էին բոտիներ, երբ
ուզում էր գլխիս մաղերը վեստել:

Մենք—Ահաբեկիչ Մարմինը—այնպիսի
մտերիմ կապերով ենք կապւած իրար
հետ, որ կարիք ունինք լայն, ինքնու-
րոյն գործունէութեան: Այդ էր իմ հա-
յեցակետը, որ այնուհետեւ, մինչեւ վեր-
ջըն էլ, պիտի պաշտպանեմ առանց զի-
ջումի:

Գուցէ սրանով ևս չօշափիցի մեր անց-
եալ կեանքի հիւանդոս կողմերից մէկը...
սակայն բաւական է այդ մասին:

Այսօր ևս ուզում եմ անպայման, ան-
կեղծօրէն հրձւիլ, անհոգ ու հանգիստ մի-
միայն ուրախանալ, ինչպէս այն արեւը,
որ հրապուրում ու հրաւիրում է ինձ փո-
ղոց, մեղմ, փաղաքչող կապոյտ երկնա-
զամարի տակ անհունապէս զւարճանալու:
Բարեւ ձեզ, թանկապին, խստապահանջ

ու աղնիւ ընկերներ, մեղ վատարանող եւ

մեղ հետ ցաւող ու տանջւող ընկերներ...

Բարեւ ձեզ իմ երեխայական բարի ու
անգին աչկիներ, որոնք ժպտում են մեղ-
մօրէն այնպէս միամիտ ժպիտով՝ ինչպէս
այսօրւայ արեւի կաթնանման հառագայթ-
ները հալւող ձիւնի վրա...»

Կալեաեւի հեռանալուց յետոյ, Օպա-
նասը մինայի շարունակում էր հսկողու-
թիւնը:

Օպանասի գերը կայանում էր նրանում,
որ մի անգամ արգէն դուած հետքը, մեծ
իշխանի կրէմլից Տւէրի պալատը գնալու
կանոնաւոր ժամերը չկորցնենք :

Որպէսզի կատարելապէս վաստահ լինէ-
ինք մեր հսկողութեան անսխալ ընթաց-
քին, զիտողութեան զիրքը պէտք էր լի-
նէր կամ Տւէրի մուտքի մօտ եւ կամ Կը-
րէմլի մօտ, որովհետեւ մեծ իշխանն իր
պաշտօնատեղին զնալու համար, կարող
էր անցնել եւ Նիկոնինսկի փողոցից, եւ
Տրօիցի գոներից: Օշանասն աւելի բար-
ւոք եւ նպատակայարմար համարեց ըն-
տըրել կրէմլի զուուը ու կանգնեց «Յար
Կօլօկօլ»-ի (զանդակների թագաւոր)
մօտ, որը դանուում էր ուղիղ պալատի դիւ-
մացը:

Վերջին երկու շաբաթը միմիայն այդ
դիրքից էր կատարւում հսկողութիւնը:
Ոչ լրտեսները եւ ոչ էլ քաղաքապահները
ոչ մի ուշադրութիւն չդարձրին մեղ վրա:

Տատանում էինք: Արգեօք ո՞ր օրն ըն-
տըրէինք մահափորձի համար: Լրադիր-
ներում կարդացի, որ փետրւարի երկու-
քին, մեծ-թատրոնում տեղի էր ունենա-
լու կարմիր խաչի մթերանոցի օդակն մի
ներկայացում: Ներկայացումը պիտի լի-
նէր մեծ իշխանուհի, Ելիզաւետա Ֆէօ-
դորովնայի, հովանաւորութեան տակ:
Անկարելի էր, որ այդ օրը մեծ իշխանը
ներկայ չլինէր թատրոնում: Դրա համար
էլ մահափորձը նշանակեցինք փետրւարի
2-ին: Դրանից մի քանի օր առաջ, Դօրա
Բրիլիանտը գնացել էր իւրիեւ քաղաքը,
որտեղ եւ պահում էր դինամիտը: Ես
գնացի նրան հրաւիրելու: Փետրւարի 1ին
մեր խումբը բոլորն էլ Մոսկայումն էր
կազմ ու պատրաստ:

Դօրա Բրիլիանտը իջեւանել էր «Ալա-
վիանսկի Բազար» (սլաւոնական շուկայ)՝
հիւրանոցում: Այնտեղ, փետրւարի 2-ի
ցերեկը, նա երկու ոռումք պատրաստեց.
մէկը կալեաեւի, միւսը Ալեքսանդրովիչի
համար: Յայտնի չէր թէ ո՞ր ժամին մեծ
իշխանը թատրոն կերթայ: դրա համար

էլ ներկայացման ակզրից երեկոյեան ժա-
մը 8ից մենք պատրաստ սպասում էինք:
Ժամը 7ին, ես գնացի Նիկոլայեւսկի
փողոցում գտնուող Ալաւեանսկի Բազար»
հիւրանոցը: Ճիշտ այդ վայրկեանին, հիւ-
րանոցի մուտքի մօտ, երեւաց Բրիլիան-
տը, ձեռքին երկու ոռումք մեծ շալի մէջ
փաթաթած: Երկուսով միասին մի քիչ
տեղ անցանք, Ծուեցինք Բօդօեաւէնսկի
նեղ փողոցը, բաց արինք շալը ու ոռումքեւ-
րը վերցնելով նրանից, տեղաւորեցի հե-
տո բերած կաշէ պահարանի մէջ:

«Բօլշայեա Զէրկասսկայա» փողոցում
ինձ սպասում էր Օպանասը. նստեցի նը-
րան սահնակն ու գնացինք գէպի իլինսկ,
ուր հանդիպեցինք կալեաեւին: Ոռումքեւ-
րից մէկը յանձնելով նրան, ճանապարհո-
շարունակեցի վարվարովկա փողոցը, որ-
տեղ սպասում էր ինձ Ալէքսանդրովիչը:
Ժամը 7.30ին երկու ոռումքն էլ յանձնել էի
արդէն: Ժամը 8ին կալեաեւը կանգնած էր
Վօսկեսենսկի հրապարակովմ, քաղաքա-
յին տան մօտ:

Մեծ իշխանը, Նիկոլայի գոներից թատ-
րոն գնալու համար, երկու ճանապարհ
ունէր. կամ կալեաեւի եւ կամ Ալէքսան-
դրովիչի մօտից պիտի անցնէր: Թէ կա-
լեաեւը եւ թէ Ալէքսանդրովիչը՝ երկուսն

էլ գիւղացու հասարակ շորերով էին—
գիւղական բաճկոն, գլուխարկ եւ երկար
կօչիկներ: Խումբերը փաթաթւած էին
հասարակ թաշկինակների մէջ:

Դօրա Բրիլլիանտը վերադարձաւ հիւ-
րանոց: Նրա հետ ժամադիր եղայ ժամը
12-ին, ներկայացումից յետոյ, ձեռնարկը
չյաջողւելու դէպքում: Օպանասը վերա-
դարձաւ պանդոկ, իսկ ես գնացի Ալէք-
սանդրեան այդին սպասելու ոռումբի պայ-
թելուն:

Սաստիկ ցուրտ էր. փչում էր ձիւնա-
խառն մրրիկ: Կալեաեւը կանդնել էր քա-
ղաքային տան սանդուխքների ստւերում-
մութ ու ամայի հրապարակի մէջ: Ժամը
9-ին, Նիկիտինսկի դռների կողմից երե-
ւաց մեծ իշխանի կառքը: Երկու պայծառ,
կաթնաթոյր լոյսով լապտերներից նա ար-
դէն ճանաչել էր մեծ իշխանին:

Կառքը ծուեց դէպի Վոսկրեսենսկի հը-
րապարակը:

Մթութեան մէջ այնպէս երեւաց, որ ին-
քը տեսնում է Ռուդենկին կառապանին,
որ միշտ մեծ իշխանին էր տանում: Այդ
ժամանակ առանց տատանւելու, վազեց
ու կառքի առաջը կարեց: Զեռքն արդէն
բարձրացրել էր ու պատրաստում էր
ոռումբ նետելու, երբ յանկարծ կառքի

մէջ նստած տեսաւ մեծ իշխանին հետ նաև
մեծ իշխանուհի Ելլզաւետա մէօդօրով-
նային ու մեծ իշխան Պաւելի երեխանե-
րին—Մարիամին ու Դլմիտրոն:

Զեռքն իջեցրեց ու մի կողմ քաշեց:
Կառքն առաջ անցաւ ու կանդ առաւ մեծ
թատրոնի մուտքի առաջ: Դրանից յետոյ
կալեաեւն եկաւ Ալէքսանդրեան այդին ու
երբ մօտեցաւ ինձ, ասաց.

— Ես կարծում եմ իրաւացի վարւեցի.
միթէ կարելի՞ է երեխաներին սպանել...

Յուզմունքից նա չէր կարողանում խօ-
սել: Զգում էր թէ ինչպիսի ծանր պատաս
խանատութեան առաջ էր կանդնած,
ձեռքից բաց թողնելով միակ յարմարա-
գոյն առիթը մեծ իշխանին սպանելու հա-
մար:

Իր այդ ինքնագլուխ վարմունքով նա
պատասխանատու էր հանդիսանում Ա-
հարեկիչ Մարմնի առաջ, նրան վարկարեկ
չանելու եւ ապագայի յաջողութիւնը ե-
րաշխաւորելու համար:

— Ոչ թէ միայն չեմ մեղադրում, ասա-
ցի նրան, այլ նոյնիսկ մեծ չափով գնա-
հատում եմ քո մեծահոգի վարմունքը:

Դրանից յետոյ նա առաջարկեց սկզբ-
րունքով որոշել մի ընդհանուր ինդիր —
իրաւունք ունի՞ կազմակերպութիւնը մեծ

իշխանի պատճառով սպանել նաեւ նրա
կինը ու ազգական երեխաներին :

Այդ հարցը երբէք վէճի առարկայ չէր
դարձել ու երբէք էլ չէր յարուցւել մեւ
պանում :

Կալեաեւը ասում էր .— Եթէ դուք կը
վճռէք երեխաներին ու կնոջը չխայել,
վերադարձին ես սռմբը կնետեմ կառքի
վրա, հաւի չառնելով թէ ո՞վեր կլինեն
կառքի մէջ նստած : 3

Իմ կարծիքն ես յայտնեցի . այդօրինակ
սպանութիւնները ես հնարաւոր չէի հա-
մարում :

Մեր խօսակցութեան ժամանակ մօտե-
ցաւ Ալեքսանդրովիչը : Նա տեսել էր որ
իշխանի կառը ծուեց դէպի կալեաեւը,
բայց որովհետեւ պայթիւնի ձայն չէր լըս-
ուել, ենթադրել էր, որ մահափորձը վի-
ժեց ու կալեաեն էլ ձերբակաւեց :

Ես կասկած յայտնեցի .— արդեօք մեծ
իշխանն եղե՞լ է կառքի մէջ, չե՞ սիսալ-
ւում արգեօք կալեաեւը մեծ իշխանուհու
կառքն զնդունելով մեծ իշխանի կառքի
տեղ :

Որոշեցինք ստուգել: Կալեաեւը պիտի
գնար թատրոնի մուտքի մօտ կանդնած
կառքերն ստուգելու, դուցէ երկու կառ-
քերն էլ այնտեղ էին, իսկ ես պիտի գնա-

յի թատրոն տեսնելու համար մեծ իշխա-
նին :

Մօտեցայ թատրոնի կասսային, որպէս-
զի տոմսակ գնեմ :

Տոմսակները բոլորն սպառւել էին . այդ
ժամանակ մօտ վագեց մի միջնորդ տոմ-
սակավաճառ (որոնք տոմսակները նախօ-
րօք առնում են աւելի թանկ գնով ծախե-
լու նպատակով) եւ տոմսակ առաջարկեց :

Մտածեցի՝ դժւար թէ հնարաւոր լինի
խուն բազմութեան մէջ մեծ իշխանին
տեսնել եւ առանց առնելու հարցրի նը-
րան .

— Մեծ իշխանուհին թատրոնումն է :
— Այո՛, քառորդ ժամ կլինի որ եկան :

— Իսկ մեծ իշխա՞նը :
— Նորին բարձրութիւնների հետ միա-
սին ժամանեցին...

Փողոցում ինձ սպասում էին Ալեքսան-
դրովիչն ու կալեաեւը . վերջինը կանդ-
նած կառքին էր դիտում :

Իսկամէս որ կառքը մեծ իշխանին էր
եւ ինքն էլ թատրոնումն էր ընտանիքի
հետ միասին :

Վճռեցինք այնուամենայնիւ սպառել
մինչեւ ներկայացման վերջը, կարող է
պատահել, որ մեծ իշխանն իր կառքով
մենակ գնար :

Երեքով միասին սկսեցինք թափառել փողոցները և աննկատելի կերպով դուրս եկանք Մոսկւա-դետի ամիս :

Կալեաեւը գլուխը կախ, մի ձեռքում ոռմբը բռնած, քայլում էր ինձ հետ միասին, իսկ Ալեքսանդրովիչը մի քանի քայլ հեռաւորութեան վրա հետեւում էր մեզ: Յանկարծ Ալեքսանդրովիչի քայլերի ձայնը լուց յետ նայեցի, տեսնեմ նա ընկել է ամբողջ մարմնով դետափի քարաշար պատին ու ինձ այնպէս թւաց, որ շուտով վայր կընկնի:

Մօտեցայ նրան. ինձ տեսնելով նա դարձաւ ու ասաց.

— Վերցրէք ոռմբը. թէ չէ հիմա ձեռքից վայր կընկնի:

Ես վերցրի:

Ներկայացումը վերջացաւ: Ժողովուր դը ցրւելու ատեն, Կալեաեւը ոռմբը ձեռքին, մենակ մօտեցաւ մեծ իշխանին կառքին ու տեսաւ որ իշխանուհին ու ազգական երեխաները մեծ իշխանի հետ միասին նստեցին կառքն ու գնացին:

Ժամը 12-ին հանդիպեցի Դօրային ու երկու ոռմբն էլ յանձնեցի նրան: Նա լուս լուսմ էր իմ պատմութիւնը տեղի ու նեցած դէպքի մասին. երբ վերջացրի պատմութիւնս, հարցրի.

— Կալեաեւի վարմունքն ու մեր որոշումը իրաւացի՞ ես դանում թէ չէ: Նա առանց աչքերը գետնից բարձրացնելու պատասխանեց.

— «Բանաստեղծը» վարւել է այնպէս, ինչպէս պիտի վարւէր . . .

Ոչ կալեաեւը եւ ոչ էլ Ալեքսանդրովիչը անցագիր չունէին. երկուսն էլ՝ իրերի հետ միասին պահ էին տեւ երկաթուղու կայարանում, ստացականն ինձ մօտ էր:

Թէ քաղաքից հեռանալու եւ թէ կայարանից անցագիր ստանալու ժամանակն անցել էր, ստիպւած էին փողոցում գեշերելու:

Ես հազնւած էի անգլիացի բարձր դասակարգի ձեւով, իսկ նրանք երկուսն էլ՝ հասարակ գիւղացու չորեր: Սաստիկ ցըը տի պատճառով նրանք յոդնել էին: Ալեքսանդրովիչն ուղղակի ոտքի վրա չէր կարողանում կանգնել:

Զնայելով նրանց անհամապատասխան արտաքինին, վճռեցի մի վտանգաւոր քայլ առնել. մտնել մի ճաշարան, ուր սովորաբար ունեւոր դասակարգն էր յաճախում, որովհետեւ ըոլոր հասարակ թէյարանները զոյ էին այդ պահուն: Եկանք Սօֆիյկայի մօտ գտնող ճաշարաններից մէկը. «Ալպիյսկայա Բօղա» անունով ճա-

շարանը :

Ճաշարանի դուանը հսկող մաքուր հագւնըւած սպասաւորը (Շւէյցար) չէր ուշզում ներս թողնել . ինսդրեցի կառավարչին կանչել , որի հետ երկար բանակցութիւնից յետոյ , վերջապէս , մեզ մի յետընկած սենեակ տւին : Այնտեղ տաք էր եւ կարելի էր ազատ խօսել :

Կալեաեւը իսկոյն կենդանացաւ : Յուղւած ձայնով նորից սկսեց պատմել քաղաքային տան առաջ պատահածը :

Նա ասում էր . «Շատ էի վախինում , որ իմ վարմունքով ծանր յանցանք դործած լինեմ կազմակերպութեան առաջ , այժմ գոհ եմ , որ ընկերները համակարծիք են ինձ հետ և չեն դատապարտում արածու : » Ալեքսանդրովիչը լուռ էր . կարծես նա բուրովին ընկճել . թուլացել էր : Մինչեւ հիմա էլ չէր կարողանում բացատրել . ինչպէս նա դիմացաւ եւ գիշերւայ մնացորդը կարողացաւ փողոցումն անցկացը նել :

Առաւոտեան ժամը 4-ին , ճաշարանը փակւելուց յետոյ , ես հրաժեշտ տւի նըրանց : Վճռեցինք հէնց նոյն շաբթւայ մէջ կրկնել մահափորձը :

Փետրւարի 2-ին Տեառնընդառաջ էր : Օպանասը շարունակում էր իր հսկողու

թիւնը մեծ իշխանի վրա : Նրա կարծիքով մեծ իշխանը հետեւեալ օրը , փետրւարի 3-ին , պիտի գնար իր պաշտօնատեղին . սակայն ոչ կալեաեւը եւ ոչ էլ Ալեքսադը սովորէլ այդ օրը չէին կարող տերրոր կատարել , անյաջողութիւնից անմիջապէս յետոյ , որովհետեւ իրար յետեւից երկու գիշեր չէր կարելի անքուն մնալ , առանց գիշեր չէր կարելի անքուն մնալ , առանց հանգստանալու : Ստիպւած պիտի յետաձգէինք :

Փետրւարի 3-ին , ցերեկւայ ժամը 2.30-ից մինչեւ 4.30-ը , Օպանասը Զերնիշեւը կի փողոցում Տւէրի պալատի մուտքի մօտ կանգնած հսկում էր : Ինչպէս երեւում էր , Տւէրում սպասում էին մեծ իշխանին , որովհետեւ դռները կիսով չափ ինանին , որովհետեւ դռները պալատական սպասուրաց էին ու երկու պալատական սպասուրները չէին հեռանում դռներից :

Ժամը 4-ին , Օպանասը սպասաւորների խօսակցութիւնից լսել էր որ այլեւս մեծ իշխանը հետեւեալ օրը , փետրւարի 4-ին , պիտի գար :

Այդ հիման վրա էլ , մենք մահափորձը նշանակեցինք 4-ին :

Փետրւարի 3-ի առաւոտեան , կալեաեւն ու Ալեքսանդրովիչը քաղաքից հեռացան ու նորից վերադարձան հետեւեալ օրը :

Այդ ժամանակամիջոցում նրանք հնա-

բաւորութիւն ունեցան մի լաւ հանգստաւնալու:

Որպէսզի մահափորձի օրը աշխատանքից ազատ լինէինք, ևս ժամադրութիւն նշանակեցի փետրարի Յին, որտեղ պատրաստ ոռումքերը պիտի յանձնէի մերոնց:

Դօրա Բըիլիանաը ոռումքերի վրայից կապուլը արդէն վերցրել էր. հարկաւոր էր նորից տեղը դնել:

Աւրբաթ, փետրարի 4-ին, ցերեկւայ ժամը 1-ին, նորից գնացի Նիկոլսկի փողոց «Սլաւեանսկի Բազար» հիւրանոցը. այնտեղ, մուտքի մօտ, տեսայ Գօրային, նախսկին ձեւով չալի մէջ փաթաթած ստացայ երկու ոռումք: Նստեցի Օպանասի սահնակն ու հաղիւ մի քանի քայլ հեռացել էինք, երբ Օպանասը իր նստած տեղից դարձաւ ինձ.

—«Բանաստեղծին» տեսե՞լ ես:

— Այո՛ :

— Ի՞նչ էր ասում:

— Ինչ պիտի ասէր, ոչինչ:

— Ալեքսանդրովիչի մասին...

— Մի՞թէ...

— Շա՛տ վատ է...

Կառապանի տեղից Օպանասը պատմեց, որ Ալեքսանդրովիչը քաղաք գալուց յետոյ հանդիսել է Կալեանին ու յայտնել

որ ինք անկարող է մասնակցիւ մահափորձին, որ փետրւար 2-ի գէտքից յետոյ ի նկատի ունենալով իր ուժերը եկել է այն համոզման, որ չի կարող տերորի մէջ աշխատել...

Այդ բոլորն Օպանասը պատմեց ինձ՝ առանց իր կողմից բառ աւելացնելու: Անել դրութիւն էր: Երկուսից մէկը պէտք էր ընտրել. կամ պէտք է Կալեանեւը մենակ դուրս գալ եւ կամ Ալեքսանդրովիչի տեղուած պիտի անցնէինք, ես կամ Օպանասը: Օպանասը կառապան էր. եթէ նրան ճերպակալէին, սոտիկանութիւնը նաև պիտի գտնէր մեր հետքն ու հսկողութեան կիրառուած միջոցներ: Ես անդիմական անձագիր ունէի. իմ ճերպակալութիւնը պատասխանատութեան պիտի հրաւիրէր անդլիացի ճարտարապետ Զէյմս Գալլուն, որ իր անցագիրը տեւել էր ինձ:

Կնշանակի մենք անմիջապէս չէինք կարող ունեէ կերպ մասնակցիւ. դրա համար անհրաժեշտ էր մահափորձը յետաձգել մինչեւ Օպանասն իր սահնակը ծախէր, կամ ես իմ անցագիրը կփոխէի:

Ուրեմն Գօրան մի անգամ էլ պիտի դատարկէր ոռումքը ու մի քանի օրից յետոյ նորից լեցնէր: Պօկատիլօվի եղեռնական մահն յիշելիս, ես զգուշանում էի

չուտ-շուտ կրկնել տալ ոռոմք լեցնելու
եւ դատարկելու գէպերը : Միւս կողմից՝
վտանդաւոր էր ու պատասխանատու
գործ, մենակ մի ոմբաձիգով—կալեակ-
ով—մահափորձ կատարել :

Մեծ իշխանի ուղեգիծը որոշ էր ու
պարզ: Շարունակ նա կառքով անցնում
էր Նիկօլսկի ու Տեքրսկի գոյների մօտով
ու գնում էր հրապարակի մօտ գտնող իր
բնակարանը: Բայց եւ այնահետ վախե-
նում էի մի ոմբաձիգով սկսել: Իմ կար-
ծիքով, մի ոռոմքը կարող էր միմիայն
վիրաւորել մեծ իշխանին. այդ գէպում
մահափորձը պէտք էր վիժած համարել:
Հարկաւոր էր չուտ, հէնց սահնակի մէջ
վճռել այդ խնդիրը, որովհետեւ կալեակ-
ովն ինձ սպասում էր իւշկովսկի փողո-
ցում:

Ալեքսանդրովիչը մնաս-բարեւի անդամ
չեկաւ. նոյն օրը երեկոյեան, նա հեռա-
ցաւ Մոսկվայից. իսկ մի քանի ամսեց
յետոյ նա մի ուրիշ տեղ մահափորձ կա-
տարեց ու դատապարտւեց մահւան պա-
տիժի, որն յետոյ փոխարինւեց յաւիտե-
նական տաժանակիր աշխատանքի: Ուրե-
մըն, նրա տատանումները մեծ իշխանի
գործում, դեռեւս ապացոյց չէր, որ ինքն

ընդունակ չէր մահափորձերի, ինչպէս
ինքն էր ենթադրում:
Ես հակւած էի յետաձգելու կողմը:
Մօտեցանք կալեակւին. երբ նա նստեց
մեր սահնակը դարձայ նրան ու ասացի.
«Իմ կարծիքով պէտք է յետաձգել մահա-
փորձը»:

Կալեակւը սաստիկ վրդովւեց.
— Ո՞չ մի պայմանով... Դօրային չի
կարելի նորից վտանդի ենթարկել... Ես
ինձ վրա եմ վերցնում ամէն բան:
Ես թեւցի մի ոմբաձիգի բոլոր անյաը-
մարութիւնները—հաւանական անյաջու-
զութիւն, պատահական վրիսումներ, ա-
նակնկալ ձերբակալութիւն եւայլն...
Բայց նա լսել անդամ չէր ուզում:

— Դու ասում ես մի ոմբաձիգը քիչէ,
մի՞թէ անցեալ օրը մէկը չէր. Ես առան-
ձին տեղ էի կանգնել, Ալեքսանդրովիչը
առանձին. էլ ո՞րտեղ մնաց քո պահեստի
ուժը, օգնական ոմբաձիգը: Ինչո՞ւ անց-
եալ օրը կարելի էր, այսօր չի կարելի:
Նորից առարկեցի, որ մեր ունեցած
պայմանուցիկ նիւթն ընդամէնը երկու ոռում
րի համար է, որ փետրւարի 2-ին, մենք
անհրաժեշտորէն ստիպւած էինք երկու
ոմբաձիգ կանգնեցնել, որովհետեւ մեծ
ոմբաձիգ կանգնեցնել, որովհետեւ մեծ

չքր, որ այսօր այդպիսի անհրաժեշտութիւն չկայ եւ որ, վերջապէս, աւելի լաւ է մեր ձեռնարկը պատահականութեան չենթարկել, այլ սպասել մի քանի օր եւ երկու ոմբածիղով սկսել մահափորձը:

Իմ բոլոր առարկութիւններին նա պատասխանեց.

— Մի՞՞ դու ինձ չես հաւատում. քե՞զ ասում եմ որ այդ գործը ես մենակ կարող եմ կատարել...

Կալեաեւին ես լաւ էի ճանաչում. գիտէի, որ մեզանից ոչ ոք չէր կարող եր ուժերի վրա այնպէս վստահ լինել ինչպէս նա: Հաւատում էի որ նա ուումբը կը նետի այն ատեն միայն, երբ բոլորովին կը մօտենայ կառքին եւ նա դիտէ ինքն իրան տիրապետել, մինչեւ վերջը պաղարին մնալ: Երկիւղ էի կրում միմիայն պատահականութիւնից:

— Լսի՞ր, Եանէօկ, (Յովհաննէսի փաղաքական մի ձեւը), ասացի նրան, այնուամենայնիւ երկուսն աւելի լաւ է քան թէ մէկը չէ՞... մի ըստէ երեւակայիր, որ վրիպեցիր, ի՞նչ անենք այն ժամանակ:

— Անհնարին է, որ ես վրիպիմ, ասաց նա ինքնավստահ չէշտով:

Նրա ինքնավստահութիւնը ինձ զինաթափ արեց:

— Եթէ մեծ իշխանն անցնի, շարունակեց նա, վստահ եղիր որ անպատճառ կը սպանեմ նրան:

Այդ ժամանակ Օպանասը կառապանի տեղից ձայն տևեց մեղ.

— Շուտ արէք, որուեցէք, ժամանակն է...

Ես տւի իմ համաձայնութիւնը: Կալեւաեւը մենակ պիտի գնար մեծ իշխանին վրա: Երկուսով էլ սահնակից իջանք. Իւմնկայի մօտից անցանք ու դիմեցինք Կարմիր հրապարակը: Գօստիննի Դուրին հասնելուն պէս, Կրէմլի աշտարակից ժամացոյցը երկու անգամ զարկեց:

Կալեաեւը կանգ առաւ:

— Մնասսրարեւ, Եանէօկ.

— Մնասսրարեւ... Նա համբուրեց ինձ ու ծոելով դէպի աջ՝ մտաւ նիկոլսկի դռները տանող նեղ փողոցը:

Սպասսկի աշտարակի մօտից անցայ, քայլերս ուղղեցի դէպի Կրէմլ ու կանգ առայ Ալէքսանդր Բ. արձանի մօտ: Այնտեղից երեւում էր մեծ իշխանի ապահովը: Մուտքի մօտ կանդնած էր մեծ բանքը: Մուտքի մօտ կանդնած էր մեծ իշխանի կառքը. ճանաչեցի կառապան իշխանի կառքը. ճանաչեցի կառապան իշխանին եւ հասկացայ, որ չուտով թուղենկինին եւ հասկացայ:

մեծ իշխանը պիտի գնար իր սլաշտօնաւտեղին :

Ճանապարհու շարունակեցի ու անցայ պալատի դռանը կանգնած կառքի մօտից, մտայ Նիկոլսկի դռներից ու դուրս եկայ Տէրը :

Դօրա Բըլլիանտի հետ մենք ժամադիր էինք եղել Ծիռ եւ ընկ. Կօնդիտերը կուում (շաքարեղին պատրաստելու դոր ծարան), որը դտնեում էր կուչնեցիկի կամուրջի մօտ :

Շատապում էի այնտեղ, որպէսզի ժամանակ ունենամ նորից Կրէմլ վերադառնալու պայթիւնը լսելու համար :

Կուչնեցիկի կամրջի վրա մի խոռվ գողը լսեցի : Կարծես թէ մէկը նեղ փողոցներից մէկում ատրճանակ արձակեց : Ո՞չ մի ուշադրութիւն չդարձրի այդ ձայնի վրա, որովհետեւ սկի նման չէր ոռումբի պայթելուն . նշանակւած տեղում, Դօրան սպասում էր ինձ. մենք երկուսով դուրս եկանք ու դիմեցինք Կրէմլ :

Յածրում, զէպի Տէրը տանող ճանապարհում մեղ հանդիպեց մի երեխայ. նա բարձրածայն բղաւելով վազում էր .

— Մեծ իշխանը սպանւեց, գլուխը կուռըրեց...

Մարդիկ չնշասպառ վազում էին Կրէմլ.

Նիկոլսկի դուների մօտ բազմութիւնն այն քան շատ էր, որ անհնարին էր անց կենալ. Ես ու Դօրան կանդ առանք :

Այդ ժամանակ, յանկարծ, մի ձայն եմ լսում .

— Պարոն, ահա իմ սահնակը եթէ ցանկանում էք...

Յետ դարձայ ու տեսնեմ Օպանասն է, սպրդնած, գոյնը ձգած. նա առաջարկում էր իր սահնակը: Նստեցինք ու ծանրքայլերով հեռացանք Կրէմլից :

— Լսեցի՞ք :

— Ո՞չ :

— Ես այնտեղ կանդնած էի պայթիւնը լսեցի, մեծ իշխանն սպանւած է: Այդ ժամանակ Դօրան թեքւեց իմ կողմն ու չկարողանալով արտասունքը զսպել, բարձր ձայնով լաց եղաւ. նրա ամբողջ մարմինը ցնցում էր հեկեկանքներից :

Աշխատեցի հանգստացնել նրան, բայց նա հանգստանալու փոխարէն, աւելի ուժեղ լացի միջից շարունակ կրկնում էր — մենք սպանեցինք նրան... ե՞ս սպանեցի նրան, ես...

— Ո՞ւմը... հարցրի սարսափած, կարծելով որ խօսքը կալեանեի մասին է:

— Մեծ իշխանին :

III

Ինձանից բաժնւելուց յետոյ, Կալեան-
ը՝ մեր պայմանի համաձայն, դիմեց ի-
վերսկի աստւածամօր պատկերի մօտ:

Այստեղ նա վաղուց տեսել էր մի հա-
սարակ շրջանակի մէջ կախւած նկար:
Այդ նկարի ասլակու միջից, ինչպէս հա-
յելու միջից, պարզ երեւում էր աստւա-
ծամօր պատկերը տանող ճանապարհը
Նիկոլսկի դռների կողմից: Այդպիսով՝
եթէ մէկը կոնակը կրէմլ դարձած կանգ-
նէր նկարի առաջ դիտելու պատրւակով,
կարող էր տեսնել մեծ իշխանին կառքով
անցնելիս: Նկարի առաջ մի վոքր կանգ-
նելուց յետոյ, ինչպէս որ որոշել էինք
սկզբից, Կալեանը ծանր քայլերով ընդ-
պատաշ մեծ իշխանին կառքին:

Նա հագնաւծ էր այնպէս, ինչպէս որ
փետրւարի 2ին, այսինքն հասարակ գիւ-
ղացու սովորական հաղուստ:

Այստեղ, կրէմլում, նա տեսաւ այն,
ինչ որ քիչ առաջ ես էի տեսել—պատրաս-
տի կառքը, մեծ իշխանի կառապանն էլ իր
տեղում նստած: Ի նկատի առնելով ժա-
մանակը, նա յետ դարձաւ նորից աստ-
ւածամօր պատկերի մօտ, մի պտոյտ գոր

ծեց «պատմական թանգարանի» եւ Նի-
կոլսկի դռների կողմից եւ կրկին վերա-
դարձաւ կրէմլ. դատարանական շէնքի
մօտ պատահեց մեծ իշխանի կառքին:

Հակառակ միմ բոլոր ջանքերին, գրում
էր նա ընկերներին ուղղած նամակներից
մէկում, փետրւարի 4-ին, ես ողջ մնացի:

Ռումբը թափով նետեցի ընդամենը 4
քայլ հեռաւորութիւնից:

Պայթիւնի ուժեղ հոսանքը դիպաւ ե-
րեսիս: Տեսայ ինչպէս ջարդ ու փշուր ե-
ղաւ կառքը: Երբ ծուխը ցրիւ եկաւ, տե-
սայ, որ մնացել եմ յետեւի անիւների
կտորների տակ: Լաւ յիշում եմ, վառողի
ծուխը քթիս առաւ, իսկ փայտի կտորնե-
րը գլխարկս դլմիցս թոցրին:

Ես վայր չընկայ, միայն թէ գլուխս թե
քեցի յետեւ: Մօտաւորապէս հինգ քայլ
ինձնից հեռու, կառքի դռներին աւելի
մօտ, տեսայ մեծ իշխանի հագուստի քըր-
քըրւած ծւէններն ու նրա մերկ մարմինը:

Կառքից տասը քայլ անդին ընկած էր
գլխարկս, մօտեցայ, վերցրի ու ծածկե-
ցի գլխիս: Նայեցի վրաս ու տեսայ որ շու-
րերս ամբողջովին քրքրւել ու կախ էր
ընկել մանր ծլանքներով եւ որ գլխաւորն
է, նրանք կիսով չափ խանձւել էին: Երեւ-

սիցս առատ արիւն էր հոսում: Մտածեցի, որ անկարող էի խուսափել, թէեւ բաւական երկար ատեն ոչ չկար մօս: Մի քանի քայլ հազիւ էի գնացել, երբ յեւտելիցս լսեցի՝ «Բոնէք, բոնէք...» Քիչ էր մնացել որ լրտեսների սահնակն ինձ իր տակովը անէր. այդ ժամանակ զգացի, որ մի ուժեղ ձեռք յետելիցս լսնեց ինձ. Ես չդիմադրեցի: Չորս կողմից թափւեցին վրաս ու ինձ շրջապատեցին քաղաքայսաները, ոստիկաններն ու զդեմիլ լրտեսները... — «Նայեցէք, ատրճանակ չլինի մօտը, ձայն առեց մէկն ու շարունակեց. փառք քե՛զ Ասուած որ ինձ էլ չսպանեց, չ՞ որ ես մօտը կանգնած էի»: սարսափելով պատմում էր պահպանողական բաժանմունքի այդ պարծեներու ծառայողը: Շա՛տ ախտոսացի որ մօսս ատրճանակ չը կար որ մի գնդակ ուղղեմ այդ «քաջարի» վախկոտի ճակատին...:

— Ինչո՞ւ էք բոնում, ասացի նրանց, մի՞ք վախենալ չեմ փախչելու. իմ գործս ես արդէն կատարեցի: Այդ ժամանակ միւայն զգացի, որ ականջներս խլացել էին, լաւ չէի լսում:

— «Կառապան կանչեցէք, կառք բերէք...»— կարդադրում էր մէկը:

Երբ կառքով անցնում էինք Կրէմլի առևելից, մի վայրկեան մտածեցի բարձրձայնով աղաղակել. «Թո՛ղ կորչի անիծեալ թագաւորը, կեցցէ ազատութիւնը, թո՛ղ կորչի անիծեալ միապետութիւնը, կեցցէ Սօց ՅԵԿ. կազմակերպութիւնը...»

Ինձ տարան քաղաքային ոստիկանաւուն:

Հաստատուն քայլերով ներս մտայ: Սասաիկ զգւանք էի զգում այդ ողորմելի վախկոտների հասարակութեան մէջ: Իմ վարմունքը խիստ յանդուցն էր, ծաղրում էի բոլորին ու արհամարհում:

Այնաեղից ինձ փոխադրեցին կալանաւորների Եակիմնակի բաժանմունքը, որւեղ հանդիսացի խորը քնով»:

Փետրւարի 4-ի դէպքին նորուած է մի յօդւած, որ տպագրւել է «Բէվոլիցիոն» նաև Ռուսիա» թերթի 60-րդ համարում: Ականատեսի պատմելով՝ այդ դէպքը տեղի է ունեցել հետեւեալ կերպով:

«Ռումբը պայթեց մօտաւորապէս ժամը 2-ից 45 րոպէ անց: Նրա ձայնը լսելի էր Մոսկվայի հոռաւոր անկիւններումն անդամ: Ամենամեծ իրարանցումը տեղի ունեցաւ դատարանի չէնքի մէջ: Բոլոր

Գլուխը մէջտեղ չկար. մարմնի մնացած մասերից ճանաչելի էին մի ձեռքն ու ոտքի մի մասը;

Այդ ժամանակ դուրս թռաւ Ելիզաւետա

Ֆէօլորովնան վերարկուով, բայց առանց գլխարկի : Ամբոխը կանգնած նայում էր առանց գլխարկները հանելու : Այդ նկատելով իշխանուհին, յարձակեց սրա նրա վրա գոռալով . . . «Ամօթ չէ՞ ձեզ համար, որ այստեղ կանգնել նայում էք, հեռացէք այստեղից . . .» Սպասառոք խնդրեց ամբոխին հանել գլխարկները, սակայն ոչ ոք, ո՛չ մի ուշադրութիւն ըլլարձեց . Նրանք մնացին իրանց տեղերում կանգնած առանց գլխարկները վերցընելու : Ոստիկանութիւնը բացակայում էր կէս ժամի չափ . Նկատելի էր որ բոլորն էլ չւարել, գլուխները կորցրել էին . . .

Դատաստանական պալատի դատախազի
օգնականը, անտարբեր ու շւարած, գողի
քայլերով մի քանի անդամ մօտեցաւ ամ-
բոխին հրապարակի կողմից ու նորից յետ
դարձաւ, մի երկու անդամ էլ կառքով ե-
կաւ ու էլի անյայտացաւ:

Բաւական ուշ եկան զինորդները, որոնք
չլթայ կատած չըջապատեցին գէպքի
մարդն ու ոռեկդին ամբոխն :

Պաշտօնական մի գրութիւն հետեւեալ
Պաշտօնական մի գրութիւն մեծ իշխանի մա-
ձեւով է նկարագրում մեծ իշխանի մա-
հր:

«1905թ. կետրւաբի 4-ին, Մոսկվա-

յում, երբ մեծ իշխան Սէրգէյ Ալեքսան-
դրովիչը կառքով անցնում էր Նիկոլա-
ևսկի ապարանքից դէպի Տւէր, Նիկոլսկի
դոներից մինչեւ Սէնատի հրապարակը 65 //
քայլ հեռաւորութեան վրա, մի անյայտ
չարագործ ոռումբ նետեց նորին բարձրու-
թեան կառքի մէջ: Ռումբը պայթեց եւ
տեղնուտեղը սպանեց մեծ իշխանին, իսկ
նրա կառապան Անդրէ Ռուդենկինը մի
քանի տեղից ծանր վէրքեր ու վնասաւած-
ներ ստացաւ: Մեծ իշխանի մարմինը այ-
լանդակ ձեւ էր ստացել.— գլուխը, վե-
զը, կրծքի վերին մասը, ձախ ուսն ու
ձախ ձեռքը մարմնից անջատւել կտոր-
կտոր էին եղել: Կողերը փշրւել էին, ձախ
ոտքը ջարդել էր, որի ներքին մասերը—
սրունքն ու թաթը կտրւել, մի կողմն էր
ընկել: Մեծ իշխանի կառքի նստելատեղը
ոռումբի պայթիւնից ցրիւ էր եկել մանր
կտորտանքներով: Բացի այդ՝ մըշակայ-
քում գտնւած բոլոր չէնքերի—դատարա-
նի, զինական մթերանոցի—լուսամուտ-
ների ապակիները փշուր-փշուր էին ե-
ղել:::

* * *

Եակիմնակի բաժանմունքից Կալեանելին

փոխադրեցին Բուտիբեսկի բանտի Պու-
գաչնակի աշտարակը:

Մի քանի օր յետոյ Կալեանելին այցելեց
նրա ձեռքով սպանւած՝ մեծ իշխան Սէր-
գէյ Ալեքսանդրովիչը ամուսինը, Ելիզա-
ւետա Ֆէօդօրովինան:

«Առանց թագյնելու պարզը պիտի ա-
սեմ, գրում էր Կալեանելը այդ տեսակցու-
թեան մասին, որ մենք նայում էինք իւ-
րար մի տեսակ խորհրդաւոր հայեցքով,
ինչպէս երկու մահկանացուներ, որոնք
կերպանի էին մնացել, ես պատահաբար,
իսկ նա կազմակերպութեան, կամ աւելի
ճիշտը, իմ կամքով, որովհետեւ թէ ես
եւ թէ կազմակերպութիւնը գիտակցա-
րար ձգաւում էինք խոյս տալ աւելուրդ ար-
իւնհեղութիւնից:

Նայելով մեծ իշխանուհուն, անկարելի
էր նրա դէմքի վրա չնշմարել չնորհակա-
լութեան զգացմունք, եթէ ոչ ինձ՝ գոնէ
մակատագրին, որ մնացել էր ողջ:

— Անդրում եմ, յիշատակի համար ըն-
դունեցէք իմ կողմից այս սրբի պատկե-
րը... ես ձեզ համար կաղօթեմ...

Ու ես ընդունեցի:

Դա իմ յաղթանակը խոստովանելու
խորհրդանշանն էր, դա միեւնոյն ժամա-

նակ ճակատագրին, շնորհակալ լինելու առպացոյց էր, որ իշխանուհուն ազատել էր վերահաս մահից ու նրա խղճի ապաշխարանքը, մեծ իշխանի դործած յանցանքների համար...

— Իմ խիղճը հանգիստ է, ասացի նըրան, շա՞տ ցաւում եմ որ իմ վարժունքով ձեզ վիշտ պատճառեցի: Ես դիտակցարար կատարեցի այդ գործը և եթէ մէշկի փոխարէն հազար կեանք ունենայի՝ հազարն էլ կնւիրէի այդ գործին: Մեծ իշխանուհին ոտքի կանգնեց, ես էլ կանգնեցի:

— Գնաք բարով, ասացի իշխանուհուն, կրկնում եմ, շա՞տ ցաւում եմ որ ձեր վշտի պատճառ եղայ, սակայն ես պարտքը եմ կատարել ու կկատարեմ մինչեւ վերջը անտրտունջ ինչ որ ինձ վիճակւածէ...»

— Մնաք բարով, որովհետեւ մենք այլ եւս չենք տեսնեի...»

Նոյն օրերում այդ տեսակցութիւնը տպագրեց մամուլում անճիշտ ու դիտաւորեալ լուսաբանութեամբ:

Մեծ իշխանուհու հետ ունեցած իր խօսակցութեան աղաւաղումը չափազանց վշտացրել էր կալեակւին:

Մարտի 24-ին, մեծ իշխանուհուն ուղղած նամակում նա գրում էր.

«Ես չէի ճանաչում ձեզ, դուք ինքներդ եկաք ինձ այցելութեան. հետեւապէս՝ մեր խօսակցութեան բոլոր պատասխանաւորութիւնը ընկնում է ձեզ վրա: Մեր տեսակցութիւնը, գոնէ արտաքին ձեւի կողմից, տեղի ունեցաւ մտերիմ հանգամանքների մէջ: Դա միմիայն մեզ երկուսիս էր վերաբերում, որ յամենայն դէպուտ, չպէտք է յայտարարւէր: Ես և դուք միմիանց հանդիպեցինք, այսպէս ասաց՝ չէզոք հողի վրա, ինչպէս դուք էք արտայայտել, մի մարդ հանդիպում է մէկ ուրիշ մարդու:»

Հետեւապէս երկուսով էլ զալտնապահութիւնից պիտի օգտւէինք հաւասար իրաւունքներով, այլապէս ինչպէս բացաւըրել ձեր քրիստոնէական զգացմունքի անշահախնդիր վիճելը:

Ես վստահեցայ ձեր աղնւութեան վրա հաւատալով որ ձեր պաշտօնական բարձր դիրքը, ձեր անհատական արժանիքը կերպաշխաւորէ բամբասանքներից ու զըրպարտութիւններից, որի մէջ այս կամ այն չափով դուք էլ խառն էք: Սակայն, դուք չվախեցաք այն բանից, որ ինքներդ

էլ կարող էք խառնւած լինել դրա մէջ։
Դէպի ձեզ ունեցած իմ հաւատը չարդաւ-
րացաւ։ Զրավարտիչ բամբասանքն ու մեր
տեսակցութեան միտումնաւոր լուսարա-
նութիւնը հրապարակի վրա է։

Հարցնում եմ։ կարո՞ղ էր մեր տեսակ-
ցութիւնը հրապարակ դուրս գալ այս կամ
այն ձեւով, ձեր կամքին հակառակ, եթէ
դուք, թէկուզ թոյլ դիմադրութիւն ցոյց
տայիք . . . մինչդեռ ձեր պատիւր պահան-
ջում էր ընդհակառակը, այսինքն մեր
տեսակցութիւնը չհրապարակէր աղա-
ւաղւած ձեւով։ Դրա պատասխանը հէնց
իրա հարցի մէջն է։

Կտրուկ կերպով բողոքում եմ, քաղա-
քական նկատումներով կատարած ձեր
յաւելումների դէմ եւ այդ բոլորն արւած
է այն բարի զգացումների եւ ներողամիտ
վերաբերմունքի փոխարէն որ ես ցոյց
տւի դէպի ձեր վիշտը։

Իմ համոզմունքներն ու իմ վերաբեր-
մունքը դէպի թագաւորող տունը, մնում
են անփոփոխ։ Եւ ես իմ «ես»ի ոչ մի
մասնիկով, ոչ մի ընդհանուր առնչութիւն
չունիմ, ոչ սնուախապաշտ, կրօնամոլ ըս-
տըրուկների եւ ոչ էլ կեղծաւոր իշխող
ների հետ։

Խոստովանուում եմ իմ սխալը, չպէտք
է կարեկցէի ձեզ եւ ոչ էլ խօսէի ձեզ
հետ։ Բայց իմ մեղմ վարժունքով՝ մեր
խօսակցութեան ժամանակ ես խնամքով
թագցրի այն արհամահանքը, որ բնակա-
նաբար տածում եմ դէպի ձեզ։ Դուք այժմ
գիտէք, թէ ի՞նչ նկատումներով եմ առ-
ուաջնորդւել ձեզ հետ խօսելիս։ սակայն,
դուք արժանի չէիք իմ մեծահոգի վար-
մունքին։ Այժմ պարզ է ինձ համար այն
որ իմ մասին հաղորդւած սխալ տեղեկու-
թիւնների աղբիւրը դուք էք, այլապէս
ո՞վ կհամարձակէր առանց ձեր հաճու-
թիւնն ստանալու, հրապարակէր իմ եւ
ձեր մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը։

Լրադրութեան հաղորդագրութիւնների
մէջ մեր խօսակցութիւնն աղաւաղւած է։
Ես ինձ չեմ յայտարարել հաւատացեալ,
զղացող ու ապաշխարող . . .»

Այդ իիստ նամակը չէր կարող չազդել
կալեաւելի ճակատագիրի վրա։
Ընկերներին ուղղած այն ժամանակւայ
նամակներում դըրում էր հետեւեալը։

«Իմ թանկագին բարեկամներ, անմոռա-
նալի ընկերներ,

Դուք գիտէք, ես ամէն բան արեցի, որ-
պէսպի փետրւարի 4-ի յաղթանակը ձեռք

բերեմ եւ ես իմ նախազգացումների սահմանում երջանիկ եմ այն գիտակցութեամբ, որ կատարեցի այն պարտքը, ուր ծանրացած էր արինոտւած Ռուսաստանի վրա։ Դուք ծանօթ էք իմ համոզմունքներին, գիտէք իմ զգացմունքների ուժը եւ թո'ղ ոչ ոք չողբայ իմ մահը։

Ես ամբողջովին նսիրեցի աշխատառը դասակարգի ազատագրութեան կուին։ Իմ կողմից ո՛չ մի զիջում չի կարող լինել բոնապետութեանը։ Եւ եթէ ես, իմ կեանքի բոլոր ձգտումներով հանդերձ՝ կարողացել եմ բանութեան դէմ համամարդկային բողոքի արժանի բարձրութեան վրա կանոնած մնալ, թո'ղ, իմ մահն էլ լինի այդ գաղափարի անարատ պսակը։ Համազմունքների համար մենել, այդ նշանակում է կուի կոչ անել, որպիսի զոհեր էլ պահանջելու լինի միապետութեան վերջնական անկումը։

Խորին կերպով հաւատում եմ, որ մեր սերունդը իր հաշիւները ընդմիշտ կմաքրէ միապետութեան հետ։

Դա կինի Սօցիալիզմի մեծագոյն յաղթանակը երբ ուռա ժողովրդի, ինչպէս նաև բոնակալ ցարիզմի լծի տակ, դաւելով ճնշած բոլոր ժողովուրդների առ

ռաջ նոր կեանքի ասպարէզ կրացւի…… Ամբողջ սրտովս ձեղ հետ եմ իմ սիրելի, իմ անմոռաց ընկերներ…… Դուք ինձ համար նեցուկ էք եղել կեանքի գժւարին վայրիկեաններում։ ձեղ հետ ես միշտ բաժանել եմ ձեր եւ մեր ընդհանուր տանջանքներն ու ուրախութիւնները եւ եթէ երբ եւիցէ համաժողովրդական յաղթանակի տօնախմբութեան ժամանակ յիշելու լինիք ինձ, թո'ղ յեղափոխական ասպարէզում կատարած իմ բոլոր աշխատանքը համարւի ձեղ համար իսան դավառ սիրոյ արտայայտութիւն դէպի ժողովուրդը եւ համակրանքի նշան դէպի իմ ընկերները։ Ընդունեցէք այն իրրեւ իմ անկեղծ անձնւիրութեան տուրքը կազմակերպութեան, որն իր մէջ ամփոփում է «Նարոգնայեա Վօլիայի» պատւիրանները իր ընդարձակ ծաւալով……

Բոլոր կեանքը ինձ թւում է հէքիաթ, ամենը ինչ որ պատահեց ինձ կարծես չա՛տ վաղուց, տարիներ առաջ ապրում էր իմ նախազգացումների մէջ։ Սրտիս խորքում այդ բոլորը հասունցաւ նրա համար միայն, որպէսզի յանկարծ փոխարկը իր բոցավառ ատելութեան եւ ինձ ստիպի վրէժ լուծել բոլորի համար։

Կուզենայի սրտիս շա՛տ մօտ և ինձ համար անսահման սիրելի անունները վերջին անգամ մէկիկ-մէկիկ յիշել... սակայն, թո՛ղ իմ վերջին հառաջանքը նըրանց համար լինի մնաս բարեւի ողջոյն և խրոխտ կոչ դէպի աղատագրական կըռու...

Գրկում ու համբուրեմ եմ ձեզ բոլորիդ

ԶԵՐ՝ Ի. ԿԱԼԵՍԵԽԻ»

«Մնաք բարեաւ, իմ սիրելի և անմոռաց ընկերներ,

Դուք խնդրում էք որ ես չշտապեմ, տակաւին մեռնելու... Եւ իսկապէս որ չեն շտապում մահացնել շուտով։

Այն օրից, երբ ես վանդակի մէջ ընկայ, ցանկութիւն չունէի այլեւս մի վայր կեան անգամ երկար ատրելու։

Յեղափոխութիւնն ինձ մի այնպիսի երջանկութիւն պարզեւեց, որ աւելի բարձր էր կեանքից։ Դուք գիտէք որ իմ մահը—դա ամենաթոյլ չնորհակալութիւնն է նըրան։ Իմ մահը ես համարում եմ—արինի եւ արցունքի աշխարհի համար—ամենավերջին բողոքը։ Պէտք է, սակայն, ցաւել որ ես միմիայն մի կեանք ունեմ, որը շըպըրտում եմ լինքնակալութեան երեսին

որպէս մենամարտի հրաւէր։ Մեծ յոյս ունեմ, որ մեր սերունդը Ահարեկիչ Մարմինի գլուխն անցած պիտի ջախջախի միապետութիւնը։ Կցանկանայի, որ իմ մասին ոչ ոք վատ բան չմտածէր։ մինչեւ վերջն էլ հաւատային զգացմունքներիս անկեղծութեանն ու համոզմունքներիս հաստատակամութեանը։ Եթէ ինձ ներումըն չնորհւի, դա կլինէր ամենամեծ անարգանքը։

Եթէ կազմակերպութեան շահերից դուրս, իմ կեանքի մէջ ուեւէ թերութիւն էք նկատել, կինդրէի որ ներողամիտ մինէիք։

Մեծ իշխանուհու հետ ունեցած խօսակցութեան առթիւ տարածւած ասէ-կօսէները ծանր կերպով տանջեցին ինձ ու թունաւորեցին իմ բանտային կեանքը։ Կարծում էի որ ես անարգւած ու խայտառակւած։ Հինգ որ գրելու հնարաւորութիւն ունեցայ, իսկոյն նամակ գրեցի մեծ իշխանուհուն, համարելով նրան բաժբասանքների յանցաւորը։

Դատը տեղի ունենալուց յետոյ զգացի որ ես խախտել եմ իմ ուղղամիտ դերքը գէպի մեծ իշխանուհին։

Դատարանում յարձակողական դերք

ջին չունչս, ձեզ հետ եմ: Կրկին անդամ
մնաք բարով...

Զերդ՝ ԿԱԼԵՍԵՒ

Ընկերներից մէկին ուղղած մի մասնաւ-
որ նամակի մէջ, անհանդիստ լինելով
մեծ իշխանուհու հետ ունեցած տեսակցու
թեան դիտաւորեալ աղաւաղումի. առթիւ,
բանտից հետեւեալն էր գրում.

27/IV. Իմ թանկագին, ներիր ինձ եթէ
ոեւէ բանով վատ տպաւորութիւն եմ թու-
ղել քեզ վրա: Մտածելն անդամ ծանր է
ինձ համար որ դու կարող ես գատապար-
տել ինձ: Այժմ, երբ արդէն կանգնած եմ
գերեզմանի առաջ, բոլորը միմիայն մի
նշանակութիւն ունի ինձ համար — յե-
ղափոխականի պատւի հարցը: Որովհե-
տեւ մահից յետոյ, այդ պատւից է կախ-
ւած իմ կաօվ Ահարեկիչ Մարմնի հետ:

Բանտի չորս պատերի մէջ գժւար է
ճիշտ գաղափար մը կազմել դուրսը կա-
տարւող կարեւոր ու անկարեւոր անցու-
դարձի մասին:

Լինում են վայրկեաններ երբ մտածում
եմ, որ չարամիտներից մէկը վիրաւորա-
կան գրութեամբ, կարող է ոսկորներս ա-
նարգել:

Այդ դէպում կցանկանայի տպրել, որ-

բռնեցի ոչ թէ տպաւորութիւն թողնելու
համար, այլ որովհետեւ ուրիշ ելք չու-
նէի:

Դատաւորները, նամանաւանդ նախա-
գահը, բացառիկ սրիկաներ են, ստոր ա-
րարածներ: Ինձ համար շա՞տ ծանր էր
սիրոս ու հոգիս բաց անել նրանց առաջ:
Ես միայն ատելութիւն ու անարգանք
ցոյց տւի նրանց:

Վճռարեկ բողոքիս մէջ, ես աշխատեցի
զուտ կուսակցական հայեցակէտ մտցնել
եւ կարծում եմ որ դատարանի առաջ կըրկ
նած իմ յայտարարութիւններով ոչ մի վը-
նաս չհասցրի կազմակերպական շահե-
րին:

Ես ասացի: — մեծ իշխանի սպանութիւ-
նը, դա մի մեղադրական ճառ է կառավա-
րութեան ու թագաւորող տան հասցէին
ուղղած: Դրա համար է, որ մեր վճռի-
մէջ ասւած է որ մեծ իշխանի սպանութիւ-
նը ոչ մի կապ չունի թագաւորի անձնաւ-
որութեան հետ, թէեւ նրա ազգականն է:
Այդ առթիւ ես բողոքեցի ի նկատի ունե-
նալով ապագայ դատավարութիւնը...

Գրկում, համբուրում եմ ձեզ: Հաւա-
տացած եղէք, որ ամէն տեղ, մինչեւ վեր-

պէսզի վրէժ լուծեմ այն վատերից, ու
բոնք ընդունակ են մտքերս դիտաւորեալ
կերպով աղաւաղելու: Բայց դու դիտես,
որ ես իմ հաշիւները արդէն փակել եմ
աշխարհի հետ:

Ես քեզ սիրում եմ... տանջւել ու ա-
զօթել ենք միասին: Խնդրում եմ, եղիր իմ
պատւի պաշտպանը:

Թերեւս մարդկանց հետ, հոգուս գաղտ
նիքների նկատմամբ, աւելի պարզ եմ ե-
ղել քան թէ հարկաւոր էր, բայց խօմ դու
դիտես որ կեղծաւոր մարդ չեմ...

Վ. Գ.-ին եւ բոլոր մերոնց բարևներ:

Մնաս բարով, իմ միակ սիրելի բարե-
կամ, երջանիկ եղիր, երջանիկ եղիր...

IV

1905 թւի ապրիլի 5ին, Կալեաեւին դա-
տեցին Սէնատի առանձին ատեանում:

Նրան պաշտպանում էին երդւեալ հա-
ւատարմեալներ, Ժդանովն ու Մանդելշ-
տամը: Ժդանովը Կալեաեւին ճանաչում
էր տակաւին Վոլոգդայից: Ի Պաշտպա-
նութիւն Կալեաեւի, նա արտասանեց մի
իմաստալից ճառ. մէկը այն լաւագոյն
ճառերից, որոնք արտասանւել են ոռւս
քաղաքական դատավարութիւնների պատ-

մութեան ընթացքում: Բայց աւելի նշա-
նաւոր ճառ արտասանեց ինքը՝ Կալեաեւ-
ը:

«Ամենից առաջ մի փաստացի ուղղում,
այսպէս սկսեց նա իր ճառը: Զեր առաջ
ես դատապարտեալ չեմ, ես ձեր գերին
եմ:

Մենք՝ ձեզ հետ միասին, երկու պատե-
րազմող կողմէր ենք: Դուք — կայսերա-
կան կառավարութեան ներկայացուցիչ-
ներդ — կապիտալի եւ բոնութեան վարձ
կան ծառաներ էք: Ես ժողովուրդի վրէժը
լուծողներից մէկը — սօցիալ յեղափո-
խական:

Մեզ բաժանում են իրարից դիակներից
կազմւած լեռներ, հարիւր հազար մարդ-
կային խորտակւած կեանքեր եւ արիւնի
եւ արցունքի ծովեր, որոնք հեղեղել են
ամրող երկիրը:

Սարսափի ու դժգոհութեան վարար հո-
սանքներով, դուք ժողովրդին պատերազմ
յայտարարեցիք, մենք ընդունեցինք ձեր
մարտահրաւէրը: Ինձ գերի վերցնելով
դուք կեանքս կարող էք ենթարկել դան-
դաղ մահւան, կարող էք սպանել ինձ,
բայց իրուեւ անհատի դուք չէք կարող դա-
տել ինձ: Որքան էլ խորամանկ միջոցնե-

գրդառում էք դատապարտել իսկ :

Ես սպանեցի թագաւորող տան անդամներից մէկին, մեծ իշխանին։ Եթէ ինձ ենթարկեին թագաւորող տան անդամների դատաստանին, դա հասկանալի կլինէր, որովհետեւ ես նրանց ցեղի բացարձակ թշնամին եմ։ Գուցէ դա 20-րդ դարի համար մի քիչ կոպիտ ու անպատճերը բան կլինէր, բայց գոնէ չփոխակ ու անկեղծ կլինէր։ Իսկ այժմ, ո՞րտեղ է այն Պիղատոսը, որ ժողովրդի արիւնի մէջ թաթախւած իր ձեռքերը տակաւին ըլւացած, ուղարկել է ձեզ այստեղ կախաղան կանգնեցնելու։

Գուցէ իշխանութեան տւած իրաւունքով ու ձեր փոքրողի խղճով դուք լիազօր էք համարում ձեզ այն աստիճանի որ ինք ներդ էք իրացրել կեղծաւոր օրէնքի անունից դատելու իրաւունքը, նոյն այդ օրէնքի օգտին։ այն ժամանակ լաւ հասկացէք, որ ես ո՛չ ձեզ եմ ճանաչում եւ ոչ էլ ձեր օրէնքը։ Կեդրոնացումը կառավարական հիմնարկութիւնների մէջ ես չեմ ընդունում։ այնտեղ քաղաքական կեղծաւորութիւնն է հովանաւորում կառավարողների բարոյական վախկոտութիւնը և քմահաճ, անդութ դատավարութիւնը

թի դիմելու լինէք ինձ վրա իշխելու, այդ տեղ դուք արդարանալու յենակէտ չունէք, ինչպէս որ չէ կարող լինել ինձ համար մեղադրանք։ Մեր մէջ հաշտութեան հող չկայ, ինչպէս որ չէ կարող լինել կառավարութեան եւ ժողովրդի միջեւ։

Մենք կանք ու կմնանք նոյն հակառակորդներն ու թշնամիները։ Եւ եթէ դուք զրկելով ինձ ազատութիւնից, թոյլ չտըւէք բարձրածայն դիմելու ժողովրդին, միւս կողմից՝ դատական հանդիսաւոր ատեան կազմեցիք, այդ դեռ չի նշանակում որ դուք իրաւունք ունիք եւ ինձ չի պարտաւորեցնում ձեզ դատաւորներ ճանաչել։

Մեր դատաւորը ո՛չ թէ պաշտօնական համագետատի օրէնքը պիտի լինի, ո՛չ թէ դասակարգային նշանակովի ստրուկ ներկայացուցիչների վկայականը, կամ թէ ժանտարմիական ստոր պաշտօնէութիւնը... Թո՛ղ մեր դատաւորը լինի պատմութեան ամենամեծ նահատակը — ժողովրդական միուսաստանը...

Փետրաւար 4-ի գործը դուք չէք ուզում լընդունել լոկ սպանութիւն, այլ անւանում էք այդ չարագործութիւն, յանցանք...

Դուք ոչ միայն դատում էք, այլեւ յան-

կատարում է մարդկային հայհոյւած իղձի անունից, բռնութեան յաղթանակի համար :

Բայց ո՞րտեղ է ձեր խիղճը : Ո՞րտեղ է վերջանում ձեր կաշառուած կամակատարութիւնն ու ո՞րտեղից է սկսում ձեր անկաշառ համոզմունքը, թէկուզ դա լինէր իմ խիղճի ու համոզմունքի հակառակը...

Դուք ոչ միայն դատապարտում էք իմ վարմունքը, այլ յանդգնում էք ձեռք բարձրացնել նաեւ նրա բարոյական արժանիքի վրա :

Ի՞նչն է ձեզ դրդում այդպէս վարւելու, ո՞վ է ձեզ իրաւունք տալիս...

Ճիշտ չէ^թ, բարձրապատիւ ու բարձրաստիճան պարոններ, որ դուք ո՛չ ոքի չէք սպանել :

Դուք յենում էք ոչ միայն սւինների ու օրէնքի վրա, այլեւ բարոյական «սկըզբունքներ»ի չէ^թ...

Նազօլէօն Գ.-ի ժամանակակից մի գիտական—պրօֆէսօրի նման երեւի ձեզ էլ երկու բարոյականութիւն գոյութիւն ունի, մէկը՝ հասարակ մահկանացուների համար, որ պատիրում է — «մի սպաներ, մի գողանար»։ իսկ միւսը՝ քաղաքական բարոյականութիւն, որն յատ-

կապէս կառավարողների համար ամէն ինչ թոյլատրելի է...»

Դուք իսկապէս հաւատացած էք որ ամէն ինչ ներելի է ձեզ եւ որ ձեր գլուխնո՛չ մի դատաւոր չկայ...

Նայեցէք, սակայն, ձեր շուրջը չորս կողմը արիւն ու հառաջանք է : Պատերազմ արտաքին եւ պատերազմ ներքին, թէ այստեղ եւ թէ այնտեղ, երկու աշխարհների մէջ տեղի ունի կատաղի ընդհարում : Երկու կողմն էլ անհաշտ թշնամիներ են միմիկանց հետ :

Մի կողմը եռուն, բարախող կեանքը, միւս կողմը ճահիճ . մի կողմը քաղաքաւկըրթութիւն, միւսում բարբարոսութիւն . մի կողմն ազատութիւն, միւսում բռնութիւն . մէկը՝ ինքնակալ-միապետութիւն, միւսը՝ ժողովուրդ...

Եւ ահա դրա հետեւանքով՝ զինւորական պետութեան խայտառակ պարտութիւն, ֆինանսական ու բարոյական վարկարեկում երկրի մէջ, միապետական հիմքերի ներքին քայլայում եւ այդ բոլորի հետ միասին, ծայրագաւառներում քաղաքական ինքնավարութեան բնական ձգտում :

Մի իօսքով . ամէն տեղ ընդհանուր ան-

բաւականութիւն, ընդդիմագիր տարրերի զարգացում, աշխատաւոր ժողովրդի մէջ բացարձակ խլրտումներ, որոնք սպասում են փոխարկւել երկարատեւ յեղափոխութեան յանուն ընկերվարութեան ու ազատութեան եւ այդ բոլորից յետոյ տերրորական գործեր...

— Ի՞նչ են նշանակում այս բոլոր երեւոյթները...

— Դա պատմութեան դատավճիռն է ձեր գլխին, դա նոր կեանքի ալեկոծումն է — երկա՞ր արհաւիրքների խտացած արթնացումը :

Դա բոնակալութեան անկումն է, նրա Հոգեվարքի վերջին երգը...

Եւ մեր օրերի յեղափոխականը կարիք չունի ցնորքների յետեւից ընկնելու, որպէսզի իր երազած գաղափարը երկնքից վայր բերի: Նա կարող է այդ բոլորը գումարել, մի յայտարարի բերել եւ ի մի ամփոփել այն, ինչ որ պատրաստի կայ կեանքի մէջ եւ իր արհամարհանքը շպըրտելով կուի մարտահրաւէրին, կարող է բոնակալութեան երեսն ի վեր համարձակակել — ևս մեղադրում եմ...

Ուսւաստանում տիրապետող յետադիմական խմբակի ղեկավարն ու աչքի ընկնող նրա ներկայացուցիչներից մէկն էր

իշխան Սէրգէյը: Այդ խմբակը երազում էր վերապարձնել Ալէքսանդր Գ. մ. ի ամենասեւ ժամանակները, որի անւան պաշտամունք էր գառնում նա: Անձ իշխան Սէրգէյի ազդեցութիւնն ու գործունչութիւնը սերտ կերպով կապւած է Նիկոլա Բ. մ. ի թագաւորութեան հետ, նրա առաջին իսկ օրերից: Խոդինակի դաշտում*) տեղի ունեցած սարսափելի կատաստրօֆը — զարհուրելի աղէտն ու այդ գործի մէջ Սէրգէյի կատարած գերը, Նիկոլայի չափագաւորութեան — առաջարաստիկ թագաւորութեան — առաջին աղետալի քայլն էր: Այդ կատաստրը բօֆի պատճառները քննող կոմս Պալէնը, գեռ այն ժամանակ, իր եղրակացութիւն իր կատարած քննութեան ասում էր: — Անպատասխանատու մարդկանց չի կարելի նշանակել պատասխանատու գործերի գլուխի:

Եւ ահա Սօց. Յեղ. մ. Ահաբեկիչ Մարմինը օրէնքի առաջ անպատասխանատու մեծ իշխան Սէրգէյին, պատասխանատու դարձրեց ժողովրդի առաջ:

*) Նիկոլա Բ. մ. թագավրութեան հանդէսը կատարեց Մոսկվայում, Խոդինսկի կոչւած դաշտում, որտեղ մօտ 10,000 մարդ սովոր տակ տրորւեց: Ծ. թ.

Որպէսզի մեծ իշխան Սէրգէյը, յեղաւիոխականների պատժի տակ ընկնէր, հարկաւոր էին մի շարք յանցանքներ եւ իսկապէս նա ժողովրդի դէմ մեղանչել է անթիւ, անհամար յանցանքներով։ Նրա վրա բարձւած կայ յանցանքների մի ահագին դէզ։ Նրա գործունէութիւնն արտայայտել է երեք տարբեր ասպարէզներում։ Իրբեւ Մոսկվայի գեներալ—նահանգապետ, նա մի այնպիսի յիշատակ է թողել, որի լոկ յիշողութիւնն անդամ, նսեմացնում է հռչակաւոր Զակրեւսկու գագանութիւնները։ Անպատասխանատու եւ օրէնքն արհամարհող մեծ իշխանը Մոսկվան դարձրել էր իր համար մի իսկապէս «մեծիշխանական» կառավարութիւն։ Կուլտուրական նախաձեռնութիւնների հետապնդում, լուսաւորութիւն տարածող ընկերութիւնների խափանում, խեղճուկրակ հրէաների հալածանք, բանւորների քաղաքական քայլերն այլասեռելու փորձեր, ժամանակակից կարդերի դէմ բողոքողների հալածանք. ահա թէ ի՞նչ գործերի մէջ է արտայայտել սպանւած իշխանի դերը, իրբեւ Մոսկվայի փոքրիկ միապետ։

Երկրորդ՝ վայելելով կառավարական ղեկավար շըջանների մէջ ազդեցիկ դիրք։

Նա յետադիմական շարժման պարագլուխ էր, բոլոր ճնշումների ներշնչողը եւ աչքի ընկնող քաղաքական գործիչների հովանաւորողը։ Գործիչներ, որոնք բռնի միշտցներով խեղճում, հալածում էին ժողովրդական-հասարակական յառաջադէմ շարժումները։

Տրօիցիկայս Լաւրայի նշանաւոր ճանապարհորդութիւնից առաջ, Պէտքէն մտաւ Մոսկվա մեծ իշխան Սէրգէյի հետ խորհրդակցելու, որից յետոյ նա անցաւ Խարկով ու Պալտաւա գիւղացիներին «խաղաղեցնելու...»

Մեծ իշխանի բարեկամն էր Պիպիադինը, իսկ հովանաւորեալներն ու արքանեակներն էին Բոպոլիստովն ու Զվերեւը։

Կառավարական քաղաքականութեան ամբողջ ուղղութիւնն ընդգծուում ու ընթանում էր մեծ իշխանի անմիջական ազգեցութեան տակ։ Նա կուռմ էր այն թոյլ փորձերի դէմ, որով Սվիատօպոլկ —Միրսկին դիտաւորութիւն ունէր մեղմելու ժամանակի երկաթէ քաղաքականութիւնը։ Նոյնիսկ այդ թոյլ փորձերը իշխանի կողմից յայտարարւեցին «վերջաւորութեան սկիզբ»։

Սվիատօպոլկին պաշտօնանկ անել տալուց յետոյ, նրա տեղ յաջողեցրեց իր հո-

վանաւորեալներից՝ Բուլիգնին ու Տրեւպովին, որոնց դերը յունվարի արիւնալի դէպքերի մէջ, աւելի քան յայտնի է : Վերջապէս մեծ իշխանի գործունէութեան երառորդ ասպարէզում, նրա դերը եղել է աւելի կարեւոր, թէեւ աւելի քիչ յայտնի : Այդ նրա ունեցած անհատական ազգեցութիւնն էր թագաւորի վրա : «Որպէս հօրեղբայր ու թագաւորի բարեկամ», այդտեղ նա երեւան է գալիս թագաւորող տան անողոք ու կատաղի ներկայացուցիչ :

Կալեաեւն իր ճառը վերջացրեց հետեւեալ խօսքերով .

— Իմ ձեռնարկութիւնը պսակւեց յաջողութեամբ . Հակառակ բոլոր արգելքներին, նոյնպիսի յաջողութիւններով պիտի պսակւին կազմակերպութեան բոլոր գործերը, որոնց նպատակն է պատմական մեծ ինդիրներ վճռելը : Խորին կերպով հաւատում եմ դրան : Ես արդէն գուշակում եմ ժողովրդական Ռուսաստանի ապագայ ազատութիւնը . Նրա աշխատաւորական կեանքի վերածնութեան արշալոյսը . . . Եւ ես ուրախ եմ ու հպարտ կեանքը զոհ բերելու այն գիտակցութեամբ որ Հնարաւորութիւն ունեցայ ազատութեան ճանապարհին պարտքս կատարելու :

Ցերեկւայ ժամը Յ-ին, յայտարարեցին կալեաեւի դատավճիռը — մահւան պատիժ, կախաղանի միջոցաւ :

«Ուրախ եմ ձեր դատավճոի համար — ասաց նա դատաւորներին — յոյս ունեմ, որ դուք էլ ձեր դատավճիռը կդործադըրէք այնպէս աշկարայ, ժողովրդի ներկայութեամբ, ինչպէս ես, օրը ցերեկով, ժողովրդի առաջ, իրավործեցի Սօց Յեղ . կազմակերպութեան դատավճիռը : Սովորեցէք սպառնական քայլերով մօտեցող յեղափոխութեան երեսին ուղիղ նայել :

Կալեաեւը վճռաբեկ բողոք տեսց : Սենատում այդ բողոքը պաշտպանում էր երդեւալ հաւատարմատար Վ. Վ. Բերենըշտամը :

Իր բողոքին մէջ կալեաեւը գրում էր .

«Ես ծնւել եմ լեհացի մօրից ու մեծացել եմ Վարչակայում : Բայց միշտ էլ ինձ համարել ոուս : Հայրս Ռեազանի նահանգի գիտական ճորտերից էր : Նրանից ես սովորեցի սիրել ոուս ժողովուրդը : Վարչակայում գտնւող միակ ոուսական գիմնազիայից ես սովորեցի մի տեսակ ոումանտիքական սիրով փարել ոուս ժողովրդին ու ծառայել նրան մարդասիրական վուճագումներով : Տակաւին փոքր հավեհ զգացումներով : Տակաւին փոքր հա-

սակիցս սկսած, իմ մէջ զարգացաւ ինձ շրջապատող իրական կեսանքն ուսումնաւ սիրելու եւ վերլուծելու ձգտումը։ Այդ իրականութիւնն ինձ սովորեցրեց հայրենի կարգերը գնահատել քննական հայեաց քով։

Ինձ համար խիստ ծանր էր ապրել «պետական հայրենասիրութեան» ու ազգային թշնամութեան մթնոլորտում։ Ահա թէ ինչու ես չմտայ Վարշաւայի համալրաբանը, այլ գնացի Մոսկւա։

Քաղաքական համոզմունքներիս հետ միասին, համահաւասար չափով զարգացաւ իմ մէջ նաեւ հասարակական համակրանք։

Սկզբում հայրս ծառայում էր Վարշաւայի ոստիկանատանը, թաղային վերահսկողի պաշտօնով, իսկ վերջերում՝ նա ծառայում էր Եղբ. Գանդհիի գործարանում, մատակարարի պաշտօնով։ Նա մի ազնիւ մարդ էր, կաշոռքներ չէր վերցընում, դրա համար էլ մենք շարունակ չըքառորութեան մէջ էինք ապրում։ Եղբայրներս մեծացան ու բանուրներ դարձան. մենակ ես բաղդ ունեցայ համալսարան մտնել։ Շա՛տ վաղ, տակաւին մանկութեան հասակից, ես ընտելացայ աշխատանքին ու ծանօթացայ նրա կարիք-

ներին. դրանից յետոյ էր որ դարձայ համոզւած սօցիալիստ։

Վստահ ուժերիս վրա, ես ոգեւորւած ձգտում էի բարձրագոյն կրթութեան։ Ազնիւ գիտաւորութիւն ունէի հասարակական անկաշառ գործիչ լինելու ու գործելու յօդուած հայրենի ժողովրդի։

Իմ այդ անկեղծ ցանկութիւնը դորձնականապէս ապացուցի հրապարակաւ առաջին անգամ 1899 թւին, Պետերբուրգի համալսարանի ուսանողական շարժումների ժամանակ։ Դրա հետեւանքն այն եղաւ որ ինձ վկանեցին համալսարանից ու այլեւս իրաւունք չտւին երկրորդ անգամ ընդունելու։ Բացի դրանից, երկու տարով էլ աքսորեցին Եկատերինոսլաւ, այն տեղի ոստիկանատան հսկողութեան տակ մնալու պայմանաւ։ Դա ինձ համար մի ծանր հարւած էր, որ ընդմիշտ որոշեց իր ճակատագիրը։

Ապրելով Եկատերինոսլաւում, ես աշխատակցում էի թերթերին, միեւնոյն ժամանակ, ուսումնասիրում էի Ռուսաստանի տնտեսական կեանքը։ Տեղական լուսաւորութեան հիմնարկութիւններից մէկում, ինձ ընտեցին քննիչ յանձնաժողովի անգամ։ Մակայն շատ էի ափսոսում,

որ երիտասարդ տարիներս կորչում էին
ապարդիւն :

Խնդիրքներով մի քանի անգամ դիմեցին
համալսարանի վարչութեան, որ ինձ նու-
րից ընդունեն. սակայն բոլորն էլ սառը
կերպով մերժեցին նոյնիսկ այն ժամա-
նակ, երբ ոստիկանական հակողութեան
առենը վաղուց լրացել էր : Ժողովրդա-
կան ազատ գրականութեան ազգեցութիւ-
նը մի կողմից, յեղափոխական սօց աղե-
մօկրատ կուսակցութեան գործիչների
հետ ունեցած մօտ յարաբերութիւններս
միւս կողմից՝ ինձ ցոյց տւին անել գրու-
թիւնից դուրս գալու ճանապարհը . ճա-
նապարհը այն մարդու, որին արգելում
էին զարգանալ եւ ինքնուրոյն կերպով
ապրել... Այդ օրից ես դարձայ համոզ-
ւած յեղափոխական :

1910 թւին, գեկտեմբերեան ցոյցերի
նախընթաց օրը, ինձ ընդունեցին սօց ա-
ղեմոկրատների կօմիտէի մէջ :

Ոստիկանութիւնը ցոյցարարներին ցը-
րիւ տւեց ու շատերին էլ վիրաւորեց :
Դրան իրը հականարւած, ես տրամադրիր
էի սպանել նահանգապետ կոմս Կելլերին,
որ մի կատարեալ պատուհաս էր ամբողջ
նահանգի համար : Բայց որովհետեւ մե-
նակ էի, դրա համար էլ ստիպւեցի հրա-

ֆարել այդ մտքից : Տերըորի միտքը խոր
արմատ էր ձգել հոգուս մէջ : Սաստիկ
պահանջ էի զգում եւ ամբողջ էռոթիւնս
կլանւած էր այդ մտքով միեւնոյն ժամա-
նակ, ծարաւի էի նաեւ գիտութեան : Գի-
տութեան ծարաւին յադուրդ տալու նը-
պատակով, ուղեւորեցի արտասահմանի
կող քաղաքը : Այդտեղ մտայ համալսա-
րան ու միեւնոյն ժամանակ, զրադւում էի
յեղափոխական գրականութեան ուսում-
հասիրութեամբ :

Արտասահմանում վերջնականապէս
կազմակերպւեցի . այսինքն որոշեց իմ
գերը : Բալմաշչեւի գործը համարեա՛ թէ
իմս պիտի լինէր, բայց որովհետեւ իմ կա-
պերը սօց աղեմոկրատների հետ էր, որա
համար էլ ես մի կողմ մնացի : Այնուհե-
տեւ ես որոշեցի մասնակցել գաղանի գոր-
ծերի այն գիտաւորութեամբ, որպէսզի
կողմնակիցներ գտնեմ յեղափոխական բա-
ցարձակ կոիւ սկսելու համար :

1902 թւի ամառը, Լուլից Բերլին անց-
նելու ժամանակ, սահմանադլիսի մաքսա-
տան մէջ, գերմանական ոստիկանութիւ-
նըն ինձ ձերբակալեց գաղտնի հրատարա-
կութիւնների հետ միասին ու յանձնեց
առև իշխանութեան : Այդ միջադէպն ար-
գելք հանդիսացաւ ու երկա՛ր ժամանա-

կով յետաձգեց դիտաւորութիւնս իրաւործելու։ Այդ անախորժ միջադէպից խոյս տալու համար էր, որ 1903 թ. հոկտեմբերին, անցայ արտասահման։ Այն օրից մինչեւ այսօր, յարմար առիթի էր սպասում, որպէսզի հրապարակ դամ աւաբեկիչի դերում։

Արտասահմանում ականատես էի թէ Ենչպիսի արհամարհանքով են նայում ոռուսների վրա։ Ռուս անունը, կարծես, անարգւած ու ամօթարեր անուն լինէր։

Ու ես եկայ այն տիսուր եզրակացութեան որ մեր հայրենիքն արատաւորող այդ նախատինքը առաջ է եկել ներքին և արտաքին պատերազմների պատճառով, որոնք ժողովրդի թշնամի կապիտալիզմի եւ կայսերական կառավարութեան մէջ կնքւած դաշնակցութեան — այդ չարագուշակ քաղաքականութեան հետեւանքներն են։

Մի քաղաքականութիւն, որ բղխում է միապետութեան դարաւոր աւանդութիւն ներից...»

Իր բողոքի իրաւաբանական բաժնում, կալեաեւն աշխատում էր մի սրբազն պարտք կատարել — կուսակցական տեսակչտ մտցնել, ինչպէս որ նոյն բանն ա-

րել էր գատարանում։ Նա չօշափում էր այնպիսի կէտեր, որոնք առնչութիւն ունեին թագաւորներին սպանելու ինդիբների հետ։ Պարզում էր կազմակերպութեան վերաբերմունքը դէպի անիշխանական գաւանանքը։

Եւ այդ բոլոր խնդիրների նկատմամբ, նա աւելորդ համարեց իր անձնական տեսակիտի մասին խօսել ու պաշտպանել։

Ահա թէ ինչ էր զրում այդ առթիւ։

«Եթէ ես ի նկատի ունենայի նորին մեծութեան անձնաւորութիւնը, պարզ կասէի, որ գործել եմ նրա դէմ եւ կարիք չունէի միտքս քօղարկելու «կայսերական տան դէմ» ընդհանուր ձեւակերպումով։ Իմ անհատական տեսակչտն աւելի քիչ կարեւորութիւն ունի եւ ներկայ դէպքում բոլորովին չի վերաբերում նորին մեծութեան, իբրեւ թագաւորող միապետի։

Մեր կուսակցութիւնը, — որքան ես եմ հասկանում կուսակցական քաղաքականութիւնը, — խնդիր չի յարուցել նորին մեծութեան անձնականի դէմ։

Իբրեւ կուսակցութեան անդամ, որը կուսակցական շահերը պաշտպանելու գիտակցութիւնն ունի, իմ բացատրութիւնների մէջ, անձնական կարծիքու արտայայ

տեցի այն չափով, ինչ չափով որ թոյլ էր
տալիս ինձ կազմակերպական կարգապա-
հութիւնը:

Խօսելով Ալէքսանդր Գ. ի քաղաքակա-
նութեան մասին, ես նկատի ունի ո՛չ թէ
նորին մեծութեան անձնաւորութիւնը,
այլ այն խմբակի յետագիմական քաղաքա-
կանութիւնը, որի մէջ մասնակցում են
մեծ իշխանները ի վնաս նորին մեծու-
թեան շահերի: Այդ միտքն արտայայտեցի
հետեւեալ խօսքերով. «Եթէ ճիշտ է որ
Պէտքէ ի նման նախարարները կործանում
են միապետութիւնը, աւելի մեծ հիմք
կայ ենթադրելու, որ Սէրդէյ Ալէքսանդր-
լովիչի նման մեծ իշխանները, վարկա-
րեկ անում թաղաւորող տան պատիւը . . .»

Իրեւե բացատրութիւն իմ ներկայ յայ-
տարարութեան, պարտք եմ համարում ա-
ւելի մանրամասն լուսաբանել միտքս ու
կարուկ կերպով յայտարարել որ ոչ ես
եւ ոչ էլ կուսակցութիւնը, նոյն տեսա-
կէտի վրա է կանգնած, ինչ տեսակէտ, որ
ունի Եւրոպայում Սոց. Դէմօկրատիան,
այսինքն, — աշխատաւոր ժողովուրդն իր
ընտրեալների միջոցով պիտի մասնակցի
պարլամէնտում, պետութիւնը կառավա-
րելու գործում:

Մեր կուսակցութիւնը, ինչպէս նաեւ
Սոց. Դէմօկրատիաները, առաջ են քշում
ներկայումս, ընդհանուր ձայնատևու-
թեան պահանջը, մի բան, որ շատ հեռու
է անիշխանականներից, որոնք ժիտում
են ուամկավար պետութեան բարիքները:

Ես կարող եմ ցոյց տալ այն ծրագիրը,
որ տաղագրւեց «Ծէվօլիւցիօննայա Ռու-
սիա» թերթի համարներից մէկում, ինչ-
պէս նաեւ այն յայտարարութիւնները, ո-
րոնք արտայայտեցին Պէտքէյի սպանու-
թեան գործում: Դրանց մէջ պարզ ու ո-
րոշ կերպով նկատելի է մեր եւ անիշխա-
նականների աշխարհահայեցքի տարբե-
րութիւնը:

Մերը շարունակութիւնն է «Նարօդնա-
յա Վօլիա» կուսակցութեան, որ նոյնպէս
հեռու է կանգնած անիշխանականնե-
րից . . .»

ՀՀ Ազգային գրադարան



NL0122684

12.120